ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

32ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 06 (1556) ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԱՐ 25, 2012
VOLUME 32, NO. 06 (1556) SATURDAY, FEBRUARY 25, 2012

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

# ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ ՊԱԿՍԵՑՈՒՑԱԾ ԵՆ ԻՐԵՆՑ ԴԻՏՈՐԴՆԵՐՈՒ ԹԻՒԸ

*ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական Հաստատութիւններու եւ Մարդու Իրաւունքներու Գրասենեակը (ԺՀՄԻԳ) մտադիր է Հայաստան ուղարկել 24 երկարաժամկէտ եւ 250 կարճաժամկէտ դիտորդներ՝ Մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններու ընթացքին դիտորդական առաքելութիւն իրականացնելու համար:*




*Նախորդ ընտրութիւններուն հետ համեմատած դիտորդներու այս թիւը աւելի նուազ է, ինչ որ մտահոգութիւն յառաջացուցած է ընդդիմադիր կուսակցութիւններու մօտ, որոնք կը պահանջեն առաւել մեծ թիւով դիտորդներ, որպէսզի անոնք կարողանան հսկողութիւն հաստատել Հայաստանի բոլոր ընտրատեղամասերէն ներս:*

*ԺՀՄԻԳ-ի գնահատման պատուիրակութեան անդամները այցելելով Հայաստան ու հանդիպումներ ունենալով իշխանութիւններու, ընտրական գործընթացի պատասխանատուներու, քաղաքական կուսակցութիւններու, լրատուամիջոցներու եւ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներու հետ, ամփոփած են խորհրդարանական ընտրութիւններէն առաջ երկրէն ներս տիրող իրավիճակը: Եզրակացութիւնը եղած է այն, որ Հայաստանի քաղաքական մթնոլորտը կը բնորոշուի իշխանութիւններու եւ ընդդիմութեան միջեւ խոր անվստահութեամբ:*

*«Թէեւ ընտրական գործընթացը կարգաւորող բարեփոխուած օրէնսգիրքը ժողովրդավարական ընտրութիւններու կազմակերպումը ապահովելու ներուժ ունի, բայց միայն օրէնսդրութիւնը չի կրնար երաշխաւորել այդ: Գլխաւոր մարտահրաւէր կը մնայ ժողովրդավարական ընտրութիւններու կազմակերպման բոլոր շահագրգիռ կողմերու հաւասար եւ պատշաճ մասնակցութիւնը», - ըսուած է ԺՀՄԻԳ-ի հրապարակած զեկոյցին մէջ:*

*Արձանագրելով, որ իշխանութիւններու կողմէ ընտրութիւններու նախապատրաստման աշխատանքները կ՚ընթանան բնականոն եւ նորմալ հունով, ԺՀՄԻԳ-ը միաժամանակ կը յայտնէ, որ ընդդիմադիրներու հետ իրենց ունեցած հանդիպումներու ընթացքին, մտահոգութիւն յայտնուած է բազմաթիւ անգամներ քուէարկութեան, վարչական միջոցներու չարաշահման եւ ընդդիմադիր կուսակցութիւններուն սատարող գործարարներու նկատմամբ ճնշումնե-*

*Շար.ը էջ 4*

## ՋՈՀԵՐՈՒ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԸ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՆ՝

# «ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԸ ԻՐԱՒՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՆԱ ՄԱՐՏԻ 1-Ի ՅԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻՑ ՄԷԿՆ Է»

*Հայաստանի նախկին արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի անդամակցութիւնը Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան (ԲՀԿ) եւ այդ կուսակցութեան ցուցակով յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն անոր մասնմակցութիւնը, բաւական մեծ աղմուկ կը յառաջացնէ ոչ միայն քաղաքական շրջանակներու մօտ, նկատի ունենալով Օսկանեանի մասնակցութիւնը քոչարեանական տարիներու իրադարձութիւններուն, այլ նաեւ՝ 2008 թուականի Մարտ 1-ի սպանդի զոհերու հարազատներուն մօտ:*

*Մարտի 1-ի զոհերէն Տիգրան Խաչատրեանի մայրը՝ Ալլա Յովհաննիսեանն «Առաջին լրատուական»-ին ըսած է, որ իր համար բոլորովին անսպասելի չէր, որ Վարդան Օսկանեան ԲՀԿ անդամ դառնալու ցանկութիւն յայտնած է. «Օսկանեանը Ռոբերդ Քոչարեանի մարդն է, իսկ ԲՀԿ-ն էլ՝ նրա կուսակցութիւնը: Ինչո՞ւ, ուրեմն, Օսկանեանը չպէտք է գնար այդ կուսակցութիւն: Այնպէս որ, նրանք մի շղթայով կապուած են իրար՝ երեւայ դա, թէ ոչ: Հիմա այդ կապն աւելի ակնյայտ է դառնում: Մարտի 1-ից յետոյ ես Օսկանեանին Քոչարեանից չեմ բաժանել, որովհետեւ նրանք երկուսն էլ հաւասար պատասխանատուութիւն են կրում մարտի 1-ի համար»:*

*«Ռոբերդ Քոչարեանը գիտակցում է, որ իր վերադարձով մեծ վնաս կը հասցնի ԲՀԿ-ին եւ կուսակցութիւնն իր պատճառով մեծ ընտրազանգուած կը կորցնի, դրա համար էլ գերադասում է ոչ թէ անձամբ մուտք գործել ԲՀԿ, այլ այնտեղ ուղարկել Վարդան Օսկանեանին»,- աւելցուցած է Տիկ. Յովհաննիսեան:*

*«Քոչարեանը մտածում է, որ Օսկանեանը աւելի մեղմ անձնաւորութիւն է եւ ոչ միայն վնաս չի հասցնի, այլեւ «պլյուս» կը բերի ԲՀԿ-ին: Միաժամանակ, իմ կարծիքով, շատ մարդիկ Օսկանեանի անդամակցութիւնից յետոյ ԲՀԿ-ին այլեւս ձայն չեն տայ»,- ըսած է Ալլա Յովհաննիսեան:*

*«Ռոբերդ Քոչարեանը Մարտի 1-ի թիւ մէկ մարդասպանն է, եւ ժողովուրդը նրան տեսնել չի ուզում: ԲՀԿ-ին Մարտի 1-ի իրադարձութիւններից չեմ անջա-*

*Շար.ը էջ 4*

# ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՆԿՐԷՍԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

*Փետրուար 19-ին Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան պատուիրակութիւնը՝ գոնկրէսական Տէյվիտ Տրայըրի գլխաւորութեամբ, հանդիպում ունեցած է նախագահ Սերժ Սարգսեանի եւ Ազգային Ժողովի նախագահ Սամուէլ Նիկոեանի հետ:*



**ԱՄՆ Գոնկրէսի անդամները Սերժ Սարգսեանի հետ**

*Ներկայացուցիչներու Տան ժողովրդավարական գործընկերութեան յանձնաժողովի նախագահ՝ գոնկրէսական Տրայըր ընդգծած է յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններու կարեւորութիւնը, երկկողմ յարաբերութիւններու տեսանկիւնէն եւ կոչ ըրած՝ կառավարութեան ու բոլոր քաղաքական կուսակցութիւններուն «ընել իրենցմէ կախուած ամէն ինչ՝ ապահովելու ազատ, արդարացի եւ վստահութեան արժանի ընտրութիւններ»:*

*Պատուիրակութիւնը հետաքրքրութիւն յայտնած է ՀՀ Ազգային Ժողովի եւ ԱՄՆ-ի Գոնկրէսի միջեւ կապերու սերտացման վերաբերեալ:*

*Գոնկրէսականները Հայաստան ժամանած էին որպէս Ժողովրդավարական գործընկերութեան յանձնաժողովի անդամներ: Յանձնաժողովը հիմնադրուած է 2005-ին, Ներկայացուցիչներու Տան կողմէ, նպատակ ունենալով աջակցիլ անկախ, ժողովրդավարական օրէնսդիրներուն:*

*Գոնկրէսի պատուիրակութեան կազմին մէջ ընդգրկուած էին Ներկայացուցիչներու Տան անդամներ՝ Տէյվիտ Տրայըր (հանրապետական, Քալիֆորնիա), Ջէյմզ Մորան (դեմոկրատ, Վըրճինիա), Ջօ Ուիլսըն (հանրապետական, Հարաւային Գարոլայնա), Ատրիան Սմիթ (հանրապետական, Նեպրասքա), Քէննի Մարչանթ (հանրապետական, Թեքսաս), Ներկայացուցիչներու Տան հոգեւոր հովիւ Վեր. Փաթրիք Գոնրոյ եւ աշխատակազմի անդամներ:*

# ԵՒՐԱՄԻՈՒԹԻՒՆԸ ԱԶԱՏ ԱՌԵՒՏՈՒՐԻ ԳՕՏԻ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՇՈՒՐՋ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԿՍԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ

*Եւրամիութիւնը որոշած է ազատ առեւտուրի գօտի ստեղծելու շուրջ բանակցութիւններ սկսիլ Հայաստանի հետ, որպէսզի խթանէ իր արեւելեան եւրոպական գործընկերոջ տնտեսական աճն ու ներդրումները: Այս մասին կը յայտնէ Եւրամիութեան պաշտօնական կայքին վրայ հրապարակուած յայտարարութիւնը:*

*Բանակցութիւնները նպատակ ունին ոչ միայն անդրադառնալ շուկայի մուտքի պայմաններուն, այլ նաեւ նպաստել Եւրամիութիւն-Հայաստանի առաւել սերտ տնտեսական կապերուն:*

*«Ազատ առեւտուրի շուրջ բանակցութիւններու սկիզբը շրջադարձային է Հայաստանի հետ մեր առեւտրային յարաբերութիւններուն մէջ: Մենք մուտք կը գործենք նոր փուլ, որպէսզի մեր տնտեսական կապերը խորութեան ու յաւակնոտութեան առումով նոր մակարդակի հասնին»,- նման գնահատական տուած է ԵՄ Առեւտուրի հարցերով յանձնակատար Քարել Դէ Գուխտ:*

*Ազատ առեւտուրի գօտին մաս կը կազմէ աւելի լայն՝ Եւրամիութեան ընկերակցութեան համաձայնագիրին, որուն շուրջ ՀՀ-ի հետ բանակցութիւններ տեղի կ՚ունենան 2010-ի Յուլիսէն ի վեր՝ Արեւելեան գործընկերութեան եւ Եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան շրջանակներէն ներս:*

*Յայտարարութեան մէջ ըսուած է, որ ԵՄ-ն նպատակ ունի բարձրացնել Հայաստանի քաղաքական կայունութեան եւ ապահովութեան մակարդակը, Հայաստանի համար ճամբայ բանալով դէպի Եւրամիութեան սպառողական շուկայ:*

*Յայտարարութեան մէջ կ՚ըսուի նաեւ, որ Հայաստանի համար պայման է շարունակել իր աշխատանքը կայուն, թափանցիկ ու կանխատեսելի տնտեսական միջավայր ստեղծելու ուղղութեամբ:*

*2011-ին Հայաստանի եւ Եւրամիութեան երկիրներուն միջեւ առեւտրական շրջանառութիւնը կազմած է 960 միլիոն եւրօ:*

# ՕՍԿԱՆԵԱՆՆ «ԱՐԱՂՈՎ» Կ'ՈՒՏՈՒԻ՞

**ԿԱՐՄԷՆ ԴԱՒԹԵԱՆ**

Օսկանեանի «յայտնութիւնը» ԲՀԿ-ում, ինչպէս Մինասեանի ամէն ինչը, շատ պատմական ստացուեց:

Իր կամաւոր գրուելու օրը (կարծում էիք իր հայրենիք Սիրիայի փողոցներում «դեգերող» ընդդիմութեան շարքերո՞ւմ էիք նրան տեսնելու. «Սուրիոյ հանգոյն նա հայաստանեան ԲՀԿ-ն է դարձնում «մարտնչող-այլընտրանքային», մանաւանդ որ Մարտի 1-ի լուրջ փորձառութիւն արդէն իսկ ունի), – ուրեմն՝ այդ պատմական, նոյնիսկ կարելի է ասել՝ տօնական օրը Մինասեանի «միւս» հայրենիք ԱՄՆ-ի հայաստանեան դեսպան միստր Հեֆեռնը հետաքրքիր մեսիջով հանդէս եկաւ: Նա «գերազանց» գնահատեց Հրազդանի ընտրութիւնները: Ինչն ուղիղ հաշուով նշանակում էր՝ աջակցութիւն օրուայ իշխանութիւններին: Իսկ ԲՀԿ-ում խոր «Արեւմուտք» խաղացող Մինասեանին մեսիջ՝ «երրորդն աւելորդ» է: Է՞լ աւելի ուղիղ մեսիջ. եղբա՞յր Վարդան (ոչ մի ուրիշ բան նկատի չունենք. հօ մենակ օրդեննրո՞ւմ չեն «եղբայր» եզրոյթն օգտագործում), առանց այն էլ քո «Սիվիլիթասից» գոհ չէինք, հիմա արդէն ըսկի չենք աջակցելու (գիտենք, որ «Սիվիլիթասը» ֆինանսաւորում է թուրքահայ ամերիկացի, որն ԱՄՆ-ի նախագահների հետ նստող-վեր կացող «տղայ» է). եզրակացութիւնները, եղբա՞յր, թողնում ենք քեզ:

Բայց էս բոլորը՝ հե՞չ: «Ֆուֆլօ»: Ջի Օսկանեանի պատմականն է լաւ, իսկ պատմականը դեռ առջեւում է: Եւ ուրեմն, այն օրը, երբ մեծն Օսկանեանը («օսկի՞» բառից է առաջացած) իր սրբազան աջով գիր էր անում՝ հայրենիքի, բոլորիս կեանքում նոր էջ բացելու կարեւորագոյն գործով, այդ նոյն օրը ոչ հեռաւոր ու հարազատ Կրեմլում ԲՀԿ առաջնորդն «արաղի» մասին պայմանագիր էր կնքում: Կրեմլ մատակարարուելիք:

Հանաք բան չիմանաք (թէ՞ դուք էլ մեզ նման տարակուսած «հաշւում» էք՝ էս Բոլոտնյայայի ու «Պոկլոննայա գարայի» արանքում շշկռուած Ռուսին մեր արա՞ղն ինչի է պէտք, մանաւանդ որ Ռուսաստանի երեք բրենդներից՝ «աղջիկներ», «Կալաշնիկով» եւ վերջապէս՝ «արաղ», «արաղն» ամենայայտնին էր աշխարհում. բայց՝ չէ. «Լիւթիկի» ու «Մուլտի գրուպի» օղին պէտք է Կրեմլի մտքին, գլխին. հե՞չ մի ասէք, մազից պրծանք. էն տարի էլ քիչ էր մնացել մեր «արտադրանքը» Բուքինգհեմեան պալատ՝ Անգլիայի թագուհու միտք ու գլխին հասնէր. Լուկաշենկոն էր քաւոր կանգնել գործին՝ ոչ անյայտ Բորիս Աբրամովիչի յեղափոխական նոտ ձեռներով. համա Օսկանեանի բախտը չբերեց անգլո-սաքսոնական «օսում» եւս. բախտի տէրը թաղեմ. ասա՝ էսօրուայ Ռուսաստանն ո՞ւմ է հետաքրքիր, որ մատակարարուես էլ):

Մի խօսքով, «Քոչարեան & Հայաստանեան ռուսխտներ» «կոնցեռնը» շատ սիրուն բարտեր առաջարկեց Կոլխայիչին առաւօտեան՝ Օսկանեանի անդամութիւնը, երեկոյեան՝ «արաղը՝ Կրեմլում»: Կարծում ենք Կոլխայիչի ինքնասիրութիւնն անսահման է շոյուած: Իր «այլընտրանքային կուսակցութիւնն» այդ «քնքշանքի» դիմաց քաղաքական գործիչ պարոն Օսկանեանին եւ պարոն Քոչարեանին յանձնելու համար:

Բայց դէ հիմա էլ նոր խնդիր է առաջանում. ինչքա՞ն պիտի խմես, որ Օսկանեանին, թէկուզ Հայաստանում, քաղաքական գործիչ համարես: Ինչքա՞ն պիտի խմես, որ ԲՀԿ-ն էլ «քաղաքական այլընտրանքային» ուժ համարես:

Ինչքա՞ն խմես, որ ողջ ազգով Մարտի 1-ը մոռանաս: Ու չհարցնես՝ Օսկանեա՞ն, նորի՞ց:

«ԻՐԱՏԵՍ DE FACTO»

# ԵՐԿՐԱՊԱՀՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ

**ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ**

ԵԿՄ համագումարի ընթացքում ունեցած իր ելոյթում, Սերժ Սարգսեանը կրկին խօսեց երկրի արդիականացման գործընթացի մասին, յայտարարելով, թէ արդիականացում է պէտք բոլոր ուղղութիւններով. «Մենք գնում ենք Հայաստանը համակողմանիօրէն արդիականացնելու ճանապարհով: Արդիականացումը վերաբերում է թէ՝ մեր քաղաքական ու իրաւական համակարգին, թէ՝ արդիւնաբերութեանը, թէ՝ գիտութեանն ու կրթութեանը: Մենք պէտք է դառնանք ժամանակակից ազգ, որ մրցունակ է եւ պատրաստ է դիմակայել պատմական պահի մարտահրաւէրներին»:

Սերժ Սարգսեանն արդէն չորս տարի է, ինչ խօսում է արդիականացումից: Բայց նաեւ չորս տարի է, ինչ իշխանութեան ճառերից բացի, գրեթէ ոչ մի այլ բանում չի նկատւում արդիականացում: Ճառերն էլ, աւելի շատ ոչ այնքան արդիականանում են, որքան նոյնիսկ դէպի հետ են գնում՝ դէպի խորհրդային դպրոցի շարադրութիւնները, երբ իրաւաբանական եւ արժէհամակարգային իմաստով խորհրդահպատակ ուսուցչակազմը հիանում էր աշակերտների շարադրութիւններում նկատուող դարձուածքներով, ինչպէս օրինակ. «Հայ ժողովրդի համար ճակատագրական պահերին, կենաց ու մահուան մարտահրաւէրների առջեւ կրկին ու կրկին զրնգացել է հայկական լայնալիճը: Ու այդ զրնգոցի կանչը արթնացրել է հայկական ըմբոստ ու պատուախնդիր ոգեկերտուածքը կրողներին», կամ. «Երկրապահը ծնող էր, որ իր թեւերը փռեց կրակների վրայ, իր մարմնով ծածկեց արհաւիրքը, մինչեւ մեծանայ ու կազմաւորուի զաւակը՝ հայոց երիտասարդ բանակը»: Դրանք հատուածներ են ԵԿՄ համագումարում ունեցած Սերժ Սարգսեանի ելոյթից:

Մինչդեռ, արդիականացող երկրում, պետութեան առաջին դէմքերից պահանջւում են ոչ թէ դարձուածաբանութեան լաւագոյն աւանդոյթներին բնորոշ ելոյթներ, որքան էլ որ դրանք արթնացնեն հին ու բարի դպրոցական յիշողութիւններ, այլ արդիականացման մասին առարկայական ճառեր՝ ոլորտ առ ոլորտ, երեւոյթ առ երեւոյթ: Օրինակ, երբ Սերժ Սարգսեանը ելոյթ է ունենում ԵԿՄ համագումարում, ապա արդիականացող երկրի տրամաբանութիւնը յուշում է, որ այդ ելոյթը պէտք է վերաբերի արդիականացող կեանքում երկրապահի դերին եւ առաքելութեանը՝ ինչպէս է տեսնում Սերժ Սարգսեանը այդ դերը, որտեղ, ինչ դրսեւորումով, ինչ որակով, ԵԿՄ առաջ ինչ պահանջներ է նա տեսնում հենց այդ արդիականացման համատեքստում:

Այլ կերպ ասած, եթէ իշխանութիւնն իրապէս երկիրը փորձում է տանել արդիականացման ուղով եւ հանրութեանը ներգրաւել արդիականացման դիսկուրսի մէջ, ապա Սերժ Սարգսեանը թիրախաւորուած լսարանների առաջ պէտք է ունենայ հենց այդ արդիականացման համատեքստում տեղաւորուող առարկայական ելոյթներ, հանդէս գայ կոնկրետ առաջարկներով, կոնկրետ գաղափարներով:

Արդաիականացումն ինքնին չափազանց ընդհանրական գաղափար է եւ պահանջում է մասնաւորեցում, ինչին պէտք է ծառայեն լսարանները, որոնց առաջ ելոյթ է ունենում արդիականացման կուրսի հրամանատարի յաւակնութիւն ներկայացնող Սերժ Սարգսեանը, նաեւ այլ բարձրաստիճան պաշտօնեաներ:

Այդ դէպքում է հնարաւոր չափել արդիականացուելու եւ արդիականացնելու ունակ իշխանութեան իրական կարողութիւնը, կամքը, անկեղծութիւնը, ընդունակութիւնը: Այլապէս, շարունակուող ընդհանրական ձեւակերպումները խօսում են, ընդ որում արդէն թերեւս տեւական ժամանակ, այդ ամէնի բացակայութեան մասին եւ հանրութեան մօտ թերեւս աւելի շատ տպաւորութիւն ստեղծում, որ իշխանութեանը արդիականացում հասկացութիւնն է պէտք, ոչ թէ երեւոյթը:

«ԼՐԱԳԻՐ»

# ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՃԱԿԸ, ԿԵՂԾՈՒԱԾ ԴԱՍԱՄԱՏԵԱՆԸ ԵՒ ՔԱՂՑԱԾ ԳՈՐԾԱՐԱՐԸ

Վարդան Այվազեանը, տեսել էր, թէ ինչպէս են ԱԺ պատգամաւորները ձգւում հետ ու առաջ, իրենց գործընկերների փոխարէն քուէարկութեան կոճակը սեղմելու համար: Բայց ոչ միայն դա դատապարտելի արարք չի համարում, այլ նման բաները նկատելու մէջ մեղադրում է չափից դուրս ուշադիր լրագրողներին ու օպերատորներին. «Թէ ձեզ ո՞վ է խնդրում տեսախցիկները անընդհատ խեղճ պատգամաւորների վրայ պահէք: Մի քիչ էլ ուրիշ տեղ թեքէք էլի»:

Ես տպաւորութիւն ունեմ, որ մանկական տարիքի «չարաճճիութիւններն» ու «խորամանկութիւններն» իրենց դրսեւորումները գտել են նաեւ օրէնսդիրի դահլիճում: Անշուշտ ընկերոջ տեղը կոճակ սեղմած անձը դպրոցական տարիներին ստուգողականների ժամանակ ընկերոջ տետրում խնդրի բաց թողնուած հատուածներում դասամիջոցին լրացումներ էլ արած կը լինի, ով գիտէ, գուցէ համալսարանում ուսանելիս՝ 120 հոգանոց լսարանում նրա փոխարէն ներկայ ստացած էլ լինի: Ա՜, ես էլ ասում եմ որտեղի՞ց է սերում ընտրութիւնների ժամանակ թուեր նկարելու արուեստը: Ախր ժամանակին էլ շատ մարդիկ դասամատեանների ազատ վանդակներում մէկումէջ 3-ներ ու 4-եր շարելու հաւես, սովորութիւն, ագուսպ մղում՝ մի խօսքով՝ պրակտիկա են ունեցել, չէ՞: Դէ իսկ նման դէպքերում եղել են չէ՞ այնպիսիք, որոնք այդ ամէնը ֆիքսել են իրենց ներքին տեսախցիկներով ու այդ մասին «հասցրել» դասղեկին: Դրանց մեծ մասն, անշուշտ, հիմա ամէն «չնչին» բան նկատող ու ժողովրդին տեղեկացնող «խաբարբզիկ» օպերատոր է դարձել:

Ինչեւէ, Մեծ պահքի շրջանն է սկսուել: Ու ես, անկախ իմ կամքից, մտածեցի, թէ ինչ տանջալի ապրումներ կ'ունենային մեր երկրի մեծահարուստ քաղաքական գործիչները, եթէ պահքը գործնականօրէն կիրառէին իրենց մարմնի վրայ: Անշուշտ ահաւոր: Ախր «չալաղաջից» յետոյ միայն կանաչեղէն ու ընդեղէն ուտելը համակենտրոնացման ճամբարում անցկացնելու նման պատիժ է: Ջնայած, ո՞վ գիտէ, այդ ժամանակ նրանցից շատերը գուցէ սեփական մաշկի վրայ զգային, թէ ինչով է սնւում իր երկրի քաղաքացին, որին քամելով էլ ամէն օր նա համալրւում-հարստանում-յագենում է նոր «չալաղաջներով»: Ուղղակի եւ անուղղակի իմաստներով:

HayNews.am

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱԿ-Ը ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է 4000 ՎՍՏԱՀՈՒԱԾ ԱՆՁ ՈՒՆԵՆԱԼ ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐՈՒՄ

*«Մարտի 1-ի հանրահաւաքին Հայ ազգային կոնգրէսը (ՀԱԿ) հանդէս կը գայ որոշակի քաղաքական նախաձեռնութիւններով՝ շեշտը դնելով առաջիկայ ընտրութիւնների ընթացքում բոլոր տեղամասերում վստահուած անձանց ներկայութեան ապահովման վրայ», այս մասին «Ընտրութիւնների հանրային վերահսկողութիւնը» խորագրի ներքոյ Հայաստանի քաղաքագէտների միութիւնում կայացած լսումների ժամանակ յայտարարեց ՀԱԿ-ի համակարգող Լեւոն Զուրաբեանը:*

*«Մեխը պէտք է լինի հետեւեալը. մենք, բնականաբար, կարողանալու ենք բոլոր տեղամասերում ունենալ վստահուած անձիք, նաեւ պլանաւորում ենք մեծամասնական համակարգով մասնակցել բոլոր 41 ընտրատեղամասերում, ինչը թոյլ կը տայ մեր վստահուած անձանց քանակը աւելացնել երկու անգամ, փաստօրէն մենք 4000 մարդ կարող ենք ունենալ ընտրատեղամասերում», - յայտարարեց ՀԱԿ-ի համակարգողը:*

*«Ընտրատեղամասերում մենք պատրաստ ենք իսկապէս ճակատամարտ տալ եւ պատրաստ ենք օգնել բոլոր նրանց, ովքեր եւս պատրաստ են ճակատամարտ տալ ընտրատեղամասերում», - յայտարարեց ընդդիմադիր գործիչը:*

*Այդ ճակատամարտն մղուելու է ոչ միայն ընտրատեղամասերում. Հրազդանի փորձը, Լեւոն Զուրաբեանի խօսքով, ցոյց տուեց, որ հարկ է յստակ մեխանիզմներ մշակել նաեւ ւ տեղամասերից դուրս ընթացող ընտրական պրոցէսները վերահսկելու համար, քանի որ հենց դրանց ընթացքում են կատարւում հիմնական ապօրինութիւնները: Իշխանութիւնները, ըստ կոնգրէսի համակարգողի, ամէն ինչ անում են, որպէսզի մրցակիցը մինչ բուն ընտրութիւններն արդէն իսկ դատապարտուած լինի պարտութեան:*

*Սակայն Հրազդանում անգամ միան ընտրատեղամասերում վստահուած անձանց յստակ վերահսկողութեան պայմաններում, Զուրաբեանի ձեւակերպմամբ, «պրոֆեսիոնալ ընտրակեղծարար յանցագործները» ստիպուած եղան քիչ թէ շատ օրինական ընտրութիւններ անցկացնել տեղամասերում եւ արդիւնքում ՀԱԿ-ն արձանագրեց աննախադէպ յաղթանակ՝ ստանալով քուէների 47 տոկոսը:*

*«Մի տոկոս, որը երբեւէ որեւէ ընտրութիւնում պաշտօնապէս ՀԱԿ-ը կամ ընդդիմութիւնը չէր արձանագրել: Նախագահական ընտրութիւններում դա 21.5 տոկոս էր, Երեւանի աւագանու ընտրութիւններում՝ 20 տոկոս», - ասաց նա:*


**ՀԱԿ-ի համակարգող Լեւոն Զուրաբեան**

*Մինչդեռ, ՀԱԿ-ի համար միանշանակ է, որ իրականում Սասուն Միքայէլեանը Հրազդանում յաղթել է, ինչում որեւէ կասկած չի կարող լինել, պնդում է Լեւոն Զուրաբեանն ու ասուածը հիմնաւորում խնդրոյ առարկայ տարածքում ժողովրդագրական իրավիճակի վերլուծութեամբ:*

*«2008 թուականի Մայիսին, երբ տեղի ունեցան Հրազդանի քաղաքապետի ընտրութիւնները, ընտրացուցակում ընդգրկուած է եղել 41 հազար ընտրող: Այս ընտրութիւններում նոյն ընտրացուցակում ընդգրկուած էր 44 հազարից աւելի ընտրող», - ասաց Զուրաբեանը:*

*Այս ֆենոմէնի գիտական բացատրութիւնը ստանալու համար Կոնգրէսի համակարգողը հետեւեալ հարցն է ուղղում քաղաքագէտներին ու լրագրողներին՝ ինչպէ՞ս հնարաւոր դարձաւ, որ ծանր սոցիալ տնտեսական ճգնաժամ ապրող մի երկրում, որտեղից հարիւր հազարներով մարդիկ արտագաղթում են, մի փոքրիկ քաղաքում, որտեղ, ի դէպ, ոչինչ չի զարգանում ու եղած աշխատատեղերն էլ պակասել են, տեղի ունեցաւ ընտրողների բում. - «Ի՞նչ է պատահել, սա բացատրութիւն պէ՞տք է ունենայ», - հարցրեց նա՝ յաւելելով, որ ՀԱԿ-ի համար բացատրութիւնը շատ պարզ է. - «Մօտ 4000 ընտրողի, ապօրինաբար, կեղծելով նրանց հաշուառումը անձնագրերում, ներգրաւել են ընտրացուցակների մէջ: Բնականաբար, ներգրաւել են այն մարդկանց, ում վրայ վստահ են եղել, ում նախապէս աճաբեկել կամ կաշառել են: Եւ այդ մարդկանց ձայներով է, որ կարողացել են խուսափել ջախջախիչ պարտութիւնից»:*

# «ՆԱԽԱԳԱՀԸ ՄԵՐ ՄԱՐՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՆ Է»


**ԵԿՄ համագումարին՝ Մանուէլ Գրիգորեան (Ձախէն առաջին) եւ Սերժ Սարգսեան կողք-կողքի**

*Փետրուար 18-ին, Մարզահամերգային համալիրում տեղի ունեցաւ Երկրապահ Կամաւորականների Միութեան (ԵԿՄ) 9-րդ համագումարը: Համագումարի աւարտին հրաւիրուած ասուլիսում ԵԿՄ վարչութեան նախագահ, գեներալ-լեյտենանտ Մանուէլ Գրիգորեանը յայտարարեց, որ առաջիկա ընտրութիւններին միութիւնը սատարելու է Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանին:*

*Պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ արդեօք առաջիկայ ընտրութիւններում ԵԿՄ-ն սատարելու է Հանրապետական կուսակցութեանը, Մանուէլ Գրիգորեանը ասաց. - «Իշխող հանրապետականին... նման բան չհնչեց, բայց որ նախագահը մեր մարտական ընկերն է, մենք իրեն սատար ենք լինելու: Մոռանո՞ւմ էք, որ նա մեր պաշտպանութեան նախարարն է եղել ծանր մարտերի ժամանակ, 93-94 թուականներին: Իր հրամաններն ենք կատարել: Ինքը մեզ չի լքել ռազմաճակատում, մենք էլ իրեն չենք դաւաճանել, կատարել ենք անխտիր բոլոր հրամանները: Կարող է հանրապետական չլինէր. ինչ կուսակցութիւն ուզում էր լինէր, ինձ դա չի հետաքրքրում: Բայց որ մենք իրեն ենք սատարելու, ես գտնում եմ, որ դրանում կասկածանք չունենք»:*

*Իսկ աւելի վաղ՝ համագումարում ունեցած ելոյթի ժամանակ, Մանուէլ Գրիգորեանը յայտարարել էր. - «Գարնանը անցկացուելու են համապետական ընտրութիւններ: Մենք մեր ակտիւ մասնակցութիւնը պիտի ունենանք առաջիկայ կայանալիք բոլոր ընտրութիւններին: Սիրելի զինակից ընկերներ, եկէք ողջունենք դահլիճում ներկայ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանին»:*

*Իսկ ԵԿՄ 9-րդ համագումարի ընդունած յայտարարութիւնում կարդում ենք. - «ՀՀ ներքին եւ արտաքին քաղաքականութեան բնագաւառում Երկրապահ կամաւորականների միութիւնը պաշտպանում է ՀՀ նախագահ, զինուած ուժերի գերագոյն գլխաւոր հրամանատար, մեր մարտական ընկեր Սերժ Սարգսեանի նախաձեռնութիւնները»:*

*Յաւելենք, որ ԵԿՄ վարչութեան նախագահի պաշտօնում վերընտրուեց Մանուէլ Գրիգորեանը:*

# «ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ» ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ ԿԸ ԼԻՆԵՆ

*Խորհրդարանի առաջիկայ ընտրութիւնները կամ կը դառնան մեր եւ մեր երկրի հերթական խարանը, կամ մենք պարզապէս իրաւունք չունենք թոյլ տալու, որ արձանագրուեն հերթական կեղծուած ընտրութիւնները,- այս կարծիքը «Ա1+»-ի լրագրողին յայտնեց «Ժառանգութեան» նախագահ Րաֆֆի Յովհաննիսեանը:*

*Նա նաեւ ընդգծեց, որ այս հարցում «ազգովի պիտի միասնական լինենք»:*

*«Մենք կարծում ենք, որ բոլոր դէպքերում բազմաճակատ պայքար ենք տանելու եւ ընտրութիւնը ճակատներից սոսկ մէկն է, մնացածը հրապարակն է»,- յայտարարեց Րաֆֆի Յովհաննիսեանը:*

*Մարտի 2-ին «Ժառանգութիւնը» ունենալու է հերթական համագումարը, որի ընթացքում Րաֆֆի Յովհաննիսեանն անակնկալներ է խոստանում: Թէ ի՞նչ անակնկալներ, չմանրամասնեց, նշեց միայն, որ համագումարին կը հրապարակուեն իրենց հիմնական ուղենիշները:*

*Անդրադառնալով «Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան հետ «Ժառանգութեան» հնարաւոր դաշինքի մասին լուրերին՝ նա տեղեկացրեց, որ այդ հարցի շուրջ դեռեւս խորհրդակցութիւններ են ընթանում:*

*Րաֆֆի Յովհաննիսեանը հաւաստիացնում է, որ իրենք «լրջագոյնս մօտենում են «Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան թէ գաղափարախօսութեան, թէ պետական նուիրուածութեան, եւ թէ համագործակցութեան ամենատարբեր առաջարկներին»:*

*ՀԱԿ-ի հետ «Ժառանգութիւն»-ը եւս համագործակցութեան եզրեր է տեսնում, սակայն պարոն Յովհաննիսեանը կարծում է, որ ՀԱԿ-ն արդէն մէկ միասնական դաշինք է ու ընտրութիւններին կը մասնակցի որպէս առանձին ուժ:*

*Րաֆֆի Յովհաննիսեանը վստահեցնում է, որ իր կուսակցութիւնն առ այսօր չի քննարկել համամասնական ցուցակը:*

*Թէպէտ «Ժառանգութիւն»-ը դէմ է մեծամասնական ընտրակարգին, այնուամենայնիւ, ըստ պարոն Յովհաննիսեանի, կուսակցութիւնն այդ ընտրակարգով թեկնածուներ առաջադրելու է:*

*Վկայակոչելով իր ծննդավայրում ընտրութիւն անցկացնելու աւանդոյթը, Րաֆֆի Յովհաննիսեանը կարծում է, որ միգուցէ 50 տարի անց Հայաստանում եւս ժողովրդավարութեան մակարդակն այնքան կը հասունանայ, որ ինչպէս ԱՄՆ-ում, մեր ընտրութիւնները եւս կ՚անցնեն «կիսահամամասնական ընտրակարգով»:*

*Րաֆֆի Յովհաննիսեանը նաեւ յայտարարեց, որ «Ժառանգութիւն» խմբակցութիւնը պատրաստւում է ԱԺ-ում եւս մէկ անգամ, թէկուզ արտահերթ կարգով քննարկելու 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին անցնելու հարցը:*

# «ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ ՉԻ ՀԱՒԱՏՈՒՄ, ՈՐ ԿԸ ԼԻՆԻ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ»

*«Խորհրդարանական ընտրութիւնների գլխաւոր առանձնայատկութիւնն այն է, որ պայքարն ընթանալու է իշխանական կուսակցութիւնների միջեւ: Սոցիոլոգներն անհանգստանում են, որ այդ պայքարը ծեծկռտուքի չվերածուի»,-ասաց սոցիոլոգ Գէորգ Պօղոսեանն փետրուար 22-ին լրագրողների հետ հանդիպմանը:*

*Փորձագէտը յայտնեց, որ ըստ հարցումների՝ խորհրդարան են անցնելու ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն եւ ՀԱԿ-ը. «Նրանց ձայն է տալու ընտրողների 75 տոկոսը: Եւս 3 կուսակցութիւն ՕԵԿ-ը, ՀՅԴ-ն եւ «Ժառանգութիւնը» կ՚անցնեն խորհրդարան, եթէ իրենց կողմը կարողանան գրաւել ընտրազանգուածի տատանուող 15 տոկոսին»: Սոցիոլոգը բացառեց «Ազատ դեմոկրատներ« նոր ձեւաւորուած կուսակցութեան անցումը խորհրդարան:*

*Նա նաեւ նկատեց. «Հարցումների ընթացքում զգացուել է, որ ՀԱԿ-ից որոշակի հիասթափութիւն կայ, որովհետեւ նրանից շատ բան էին սպասում: Սակայն ՀԱԿ-ը ցանկացած ժամանակ կարող է կիրառել իր ռեզերվը»:*

*Պօղոսեանի խօսքով ընտրողների մեծամասնութիւնը չի հաւատում, որ կը լինեն արդար ընտրութիւններ»:*

# 24 ՏԱՐԻ ԱՌԱՋ «ՍԿՍՈՒԵՑ» ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ



1988թ. փետրուարի 20-ին ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամաւորների մարզային խորհուրդն արտահերթ նստաշրջանում որոշում ընդունեց անջատուել Ատրպէյճանից եւ միանալ Հայաստանին: Համապատասխան դիմումներ ուղարկուեցին Ատրպէյճանի եւ Հայաստանի Գերագոյն խորհուրդներին: Նամակ ուղարկուեց նաեւ ԽՍՀՄ ԳԽ՝ հիմք ընդունելով գործող իրաւական նորմերն ԽՍՀՄ-ում նմանատիպ վէճերի լուծման նախադէպերը:

Ատրպէյճանի եւ Միութենական պառլամենտները մերժեցին այդ դիմումը, իսկ Հայաստանի Գերագոյն խորհուրդը համաձայնեց եւ արդէն 1989թ. Դեկտեմբերի 1-ին ընդունուեց Հայաստան- Արցախ միացման ակտը, այլ հարց է, որ գործնականում այդ միացումը տեղի չունեցաւ .Արցախը ստիպուած եղաւ Ատրպէյճանի կազմից դուրս գալուց յետոյ միայնակ որոշել իր յետագայ ճակատագիրը. 1990թ. Ապրիլի 3-ի «Խորհրդային Միութիւնից Միութենական Հանրապետութեան դուրս գալու հետ կապուած հարցերի լուծման կարգի մասին» օրէնքով ինքնավար կազմաւորումները եւ հաւաք բնակուող ազգային փոքրամասնութիւնները իրաւունք ստացան դուրս գալու հանրապետութեան կազմից՝ դառնալով ինքնուրոյն Միութենական սուբիեկտ եւ Արցախն իրեն «դաւաճանուած» զգալով եւ ապացուցելու, որ ի զօրու է միայնակ կերտել իր անկախութիւնը, 1991թ. Սեպտեմբերի 2-ին՝ ժողովրդական պատգամաւորների Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանում, (ԼՂՀ) նախկին ԼՂԻՄ եւ Շահումեանի շրջանի սահմաններում հռչակուեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն: Իսկ արդէն, Դեկտեմբերի 10-ին անցկացուած հանրաքուէով, Արցախի անկախութիւնը ամրագրուեց դէ յիւրէ:

Ատրպէյճանի կազմից դուրս գալու 88 թուականի փետրուարեան որոշման դիմաց, որի ծիլերն աւելի վաղ էին զգուել, Արցախը թանկ վճարեց. վէճը քաղաքակիրթ հուն տեղափոխելուն ուղղուած խւրաքանչիւր գործողութեանը հետեւեցին բռնութիւններ, հայ ազգաբնակչութեան իրաւունքների զանգուածային եւ համատարած ոտնահարում, ժողովրդավարական բռնանուաճում, տնտեսական շրջափակում. ԼՂԻՄ-ից հարիւրաւոր կիլոմետրեր հեռու գտնուող ատրպէյճանական քաղաքներում Սումգայիթում, Պաքւում, Կիրովաբադում, Շամխորում, իսկ յետոյ նաեւ ողջ Ատրպէյճանում կազմակերպուեցին հայերի ջարդեր ու զանգուածային սպանութիւններ, զոհուեցին եւ վիրաւորուեցին հարիւրաւոր մարդիկ: Ատրպէյճանի եւ Լեռնային Ղարաբաղի քաղաքներից ու գիւղերից շուրջ 450 հազար հայ փախստական դարձաւ:

Ատրպէյճանական ագրեսիան վերաճեց պատերազմական գործողութիւնների, որը տեւեց մինչեւ 1994-ի Մայիս : Այսօր փաստացի գտնւում ենք չյայտարարուած պատերազմի մէջ, ընդամէնը հրադադար է: ԼՂՀ հակամարտութեան կարգաւորման եղած եւ առկայ տարբերակների շուրջ քննարկումներին զուգահեռ, Հայաստանում չեն դադարում բուռն քննարկումները Արցախ- Հայաստան վերամիաւորման հարցի շուրջ: Դէմ եւ կողմ կարծիքները գրեթէ հաւասար են:

HayNews.am

# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԻՑ ԵՒ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԻՑ ԴԷՊԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՒ ՀԱՏՈՒՑՈՒՄ

**ԷԴՈՒԱՐԴ ՇԱՐՄԱԶԱՆՈՎ**
*ԱԺ փոխխօսնակ*

Ֆրանսիայի Սենատի կողմից ցեղասպանութիւնների ժխտումը քրէականացնող օրինագծի ընդունումը կարեւոր է ոչ միայն աշխարհում Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման գործընթացի խթանման համար, այլեւ թրքական քսենոֆոբիայի, ժխտողականութեան եւ պատմական փաստերի կեղծման պետական քաղաքականութեանը հակազդելու տեսանկիւնից: Այն նաեւ բարձրացնում է բարոյական հատուցումը դեկլարատիւից նոր՝ կանխարգելիչ մեխանիզմների գործարկման մակարդակի:

Կարեւոր էր այն, որ Հայոց ցեղասպանութիւնը մէկ հարթութեան վրայ դրուեց Հոլոքոստի եւ Ռուանդայի ցեղասպանութեան հետ: Սա այն դէպքն էր, երբ եզակիութեան գործօնը աշխատում էր ոչ թէ յօգուտ, այլ ի վնաս, իսկ խնդիրը տեղափոխելով «հայերինը լինելուց» դէպի համամարդկային հարթութիւն եւ ունիֆիկացնելով միւս՝ արդէն բոլորի կողմից ճանաչուած ցեղասպանութիւնների հետ, մնացած երկրների համար ճանաչման անհրաժեշտութեան հիմնաւորումներն ու փաստարկումները էապէս հզօրանում են:

Սա Ֆրանսիա-Հայաստան-Սփիւռք եռամիասնութեան յաղթանակն էր:

Հայաստանի եւ հայ ժողովրդի հետ Ֆրանսայի դարաւոր բարեկամական յարաբերութիւնները ոչնչով չեն զիջում ռազմավարականին եւ ոչ թէ արարողակարգային են, այլ գործնականօրէն արդիւնաւէտ:

Ցեղասպանութեան ժխտողականութեան դէմ օրինագծի ընդունումը պատմական արդարութեան վերականգնման ու հատուցման ուղղութեամբ Հայաստան-Սփիւռք ջանքերի համատեղման տրամաբանական արդիւնքն է:

Թէեւ ոմանք առանձնացնում, շահարկում են դրդապատճառներից «կարեւորագոյնը», իսկ որոշ ուժեր փորձում սեփականացնել գրանցուած յաջողութիւնը, ակնյայտ է, որ օրինագծի ընդունումը շահագրգիռ բոլոր ուժերի ջանքերը ժամանակին մոբիլիզացնելու եւ փոխլրացնելու արդիւնք է:

Օրինագծի ընդունումը հայկական ընտրազանգուածի ձայները շահելու հետ կապելը անհեթեթութիւն է մի երկրում, որտեղ թրքալեզու ընտրազանգուածը շատ աւելի մեծաքանակ է, իսկ հայկական կազմակերպութիւններն ու ականաւոր գործիչները բազմակարծիք են քաղաքական հայեացքների ու կուսակցական կողմնորոշումների հարցում:

Իսկ այն փաստարկը, թէ օրինագծի ընդունումը Ֆրանսայի իշխանութիւններն օգտագործեցին որպես Թուրքիայի նկատմամբ լրացուցիչ ճնշման գործիք՝ ամենեւին ճշմարիտ չէ: Թէեւ Ֆրանսան դէմ է Թուրքիայի եւրաինտեգրմանը, վերջինիս ճանապարհին արդէն իսկ առկայ խոչընդոտներն էլ (կիպրական խնդիր, ժողովրդավարական բարեփոխումներ) բաւական են: Ֆրանսան միշտ աչքի է ընկել մարդու իրաւունքների պաշտպանի իր համբաւով եւ համարձակութեամբ՝ դրանք պաշտպանելու համար միջոցների ընտրութեան հարցում: Սակայն հէնց Սարկոզիի վարչակարգն էր, որ միջազգային վերջին զարգացումների ֆոնին, զգալով միջազգային ասպարէզում Ֆրանսայի աննախադէպ եւ օրէցօր աւելացող հզօրացումը, փորձեց կրկին անգամ անցկացնել օրինագիծը:

Ուշագրաւ է նաեւ այն, որ Հայաստանը կարողացաւ չէզոքացնել, ես կ՚ասէի՝ հակառակ օգտագործել Ցեղասպանութեան ճանաչման խաղաքարտը հայ-թրքական կարգաւորման գործընթացում: Թւում էր, թէ միջազգային հանրութիւնը պէտք է ենթարկուէր հայ-թրքական գործընթացին չվնասելու համար Ցեղասպանութեան ճանաչման գործընթացը սառեցնելու թրքական յորդորներին: Սակայն ստացուեց այնպէս, որ միջազգային հանրութեան քայլերը վերահաստատում են կարգաւորման հիմքում ընկած Հայաստանի այն դիրքորոշումը, որ երկու գործընթացները որեւէ կերպ փոխկապակցուած չեն, եւ Ցեղասպանութեան ճանաչման գործընթացից հետ կանգնելը չի կարող պայման լինել հայ-թրքական կարգաւորման գործընթացի վերակենդանացման համար:

Ֆրանսայի հայկական սփիւռքը՝ ի դէմս քաղաքական, տնտեսական, մշակութային եւ այլ ոլորտներում ներգրաւուած ականաւոր գործիչների ու մտաւորականների,

Շար.ը էջ 16



# ՎԱՐԴԱՆԱՆՔ

«Զուգութիւն է մայր բարեաց եւ անզուգութիւն ծնող չարեաց» – «Միաբանութիւնը բարի գործերու մայրն է, իսկ անմիաբանութիւնը՝ չար գործերու ծնողը» (Եղիշէ):

ԴՈԿՏ. ԱԲԷԼ ՔՀՆՑ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

*Ազգերու պատմութեան մէջ հազուադէպ երեւոյթ է, որ պարտութիւն մը նուիրագործուի դառնալով հպարտութիւն, սերունդներու ներշնչումի աղբիւր՝ անդաւաճան հայրենասիրութեան եւ կրօնաբոյր զգացումներու: Ժամանակներ կային, երբ Աստուած եւ կրօնը ընդհանրապէս մարդկային կեանքի կեդրոնը կը կազմէին ու անոր կու տային ուրոյն բովանդակութիւն մը: Հզօր տէրութիւններ գիտէին գործածել կրօնին ուժը իրենց քաղաքական ազդեցութիւնը տարածելու, ինչո՞ւ չէ նաեւ ռազմական նուաճումները ապահովելու հեռանկարով: Անոնք, փոքր ցեղեր եւ ժողովուրդներ իրենց ենթարկելու, նաեւ զանոնք իրենց մէջ ձուլելու նպատակով, երբեմն կը գործադրէին քարոզչական ծրագրուած աշխատանքին միջոցը, բայց յաճախ զինու զօրութեամբ եւ ասպատակութիւններով կ՚արդարացնէին իրենց ենթականերուն հանդէպ կրօնին առջեւ իրենց ունեցած գերազանց պատասխանատուութիւնը, նաեւ հանդերձեալ կեանքին համար: Ի տարբերութիւն մեծերու, փոքր ազգերը սակայն, հզօրներու երախին մէջ անհետանալու վտանգը վանելու բնազդական մղումով, իրենց հաւատալիքներուն եւ նոյնպէս կրօնին կը փարէին, զանոնք նկատելով իրենց գոյութիւնը պաշտպանելու փայլուն զրահանդերձը: Այսպէս, Ե. դարու կէսին, իրարու կը բախէին Սասանեաններուն զրադաշտը եւ Հայոց քրիստոնէական հաւատքը, մին՝ զօրեղին զէնքը նուաճելու, միւսը՝ համեմատաբար շատ աւելի տկարին պողպատեայ վահանը՝ կործանարար հարուածը դիմագրաւելու եւ օտարի բռնատիրութենէն ազատագրելու համար հայրենիքը:*

*Վարդանանք՝ պատմական եղելութեան մը սահմանումը չեն սոսկ, այլ ամենաշքեղ արտայայտիչն են հայ ցեղի ազատատենչ եւ բիւրեղ նկարագրին: Անոնք անզուգական դիւցազնութեան մը կենդանի ոգեղինացումն են զոհաբերելու իրենց անձը, գտնելու համար աւելի՛ գեղեցիկը՝ ուրիշներու փրկութեան եւ բարձրացման մէջ:*

*Ի՞նչ է Վարդանանց Տօնը կամ ո՞վքեր էին Վարդանանք, որոնց յիշատակը մեր ժողովուրդը, հայ աշխարհի ամբողջ տարածքին, ահաւասիկ, 16 երկար դարերու տեւողութեան, մասնաւոր շուքով կը նշէ:*

## ՎԱՐԴԱՆԱՆՔ ԿԱՄ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ՝ 451

*Ի՞նչ է Վարդանանց Տօնը կամ ո՞վքեր էին Վարդանանք, որոնց յիշատակը մեր ժողովուրդը, հայ աշխարհի ամբողջ տարածքին, ահաւասիկ, 16 երկար դարերու տեւողութեան, մասնաւոր շուքով կը նշէ:*

*Վարդանանք կամ Սրբոց Վարդանանց Զօրավարաց՝ 451 թուականի Մայիս 26ին, Աւարայրի դաշտին մէջ, յաջորդող օրերու հետապնդումներու եւ մարտերու ընթացքին ինկած 1036 վկաներն են: Անոնց սուրբ յիշատակը կը նշուի մեր Եկեղեցւոյ տօնելի սուրբերու՝ «Վասն Յիսուսի եւ Հայրենեաց» պարսկական զօրքին դէմ պատերազմած եւ զոհուած հերոսներու հաւաքական անունին ներքոյ:*

*Աւելի լայն իմաստով, անոնք նշանակութիւն կը ստանան պարսկական տիրապետութեան դէմ 449-451 թթ. Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնեանի եւ անոր կողմնակից նախարարներու գլխաւորութեամբ՝ հայրենիքի ազատագրութեան, Հայաստանի մէջ քրիստոնէական հաւատի պաշտպանութեան համար հայ ժողովուրդի մղած պայքարի պատմական փաստով:*

## ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ

*Հայաստանի աշխարհագրական դիրքը, սահմանակից ըլլալով երկու աշխարհակալ տէրութիւններու, արեւելքէն՝ Սասանեան Պարսկաստանը, իսկ արեւմուտքէն՝ արեւելեան Հռովմէական Կայսրութիւնը կամ Բիւզանդիան, զինք մղած էր երբեմն հեղձուկ կացութեան մը մէջ, դարձնելով ակամայ կռուախնձոր այս երկու հսկաներուն միջեւ: Անոնք կասկածոտ մտքով եւ նախանձոտ աչքերով կը հետեւէին Հայաստանի մէջ տեղի ունեցող քաղաքական-մշակութային բոլոր զարգացումներուն, քանի որ անոր մէկ կամ միւս կողմ հակումը ռազմա-քաղաքական առաւելութիւն եւ ապահովութիւն պիտի տար կա՛մ պարսկաստանի, կամ Բիւզանդիոյ: Արեւելեան Պարսկակա՞ն, թէ արեւմտեան բիւզանդական քաղաքականութիւն. ահա՛ այս երկընտրանքին առջեւ կը գտնուէր հայկական պետութիւնը, որ ասոնց դէմ մերթ կ՚ըմբոստանար, կ՚ընդվզէր, մերթ ստիպուած կ՚ենթարկուէր, մի՛շտ պահել ջանալով իր ներքին անկախութեան իրաւունքը:*

*Քաղաքական դէպքերու այս կամ այն ուղղուածութիւնը որդեգրելու ընթացքին, շրջադարձային հիմնական եղելութիւնը որ տեղի ունեցաւ Հայաստանի մէջ՝ Հայոց դարձն էր դէպի քրիստոնէական հաւատքը 301 թուականին: Արշակունի թագաւորներու Հայաստանի թեւը, ինչո՞ւ չէ նաեւ, որոշակի իմաստով, Հայոց աւազանին, Պարթեւներէն ժառանգած էին իրենց ցեղային արիւնը: Խութեան մէջ, արեւելեան-պարսկական մշակոյթը աւելի ընտանի, հետեւաբար աւելի հարազատ էր Հայոց ցեղական բարքերուն, աւանդութիւններուն եւ սովորութիւններուն: Սակայն Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ պետական կրօն հռչակելու փաստը գերազանցապէս խախտեց այս հաւասարակշիռը, եւ արեւմտեան քաղաքակրթութեան նժարին վրայ հետզհետէ աւելցուց ծանրութիւնն ու հակուածութիւնը, յատկապէս Եկեղեցիին առաքելական գործունէութեան ճանապարհով: Հայաստանի արեւելեան մասը, ուր տակաւին ամուր կը թուէր Պարսկաստանի հետ քաղաքական կապը, միեւնոյնն է, մշակութային կողմնացոյցը Հայոց միտքն ու սիրտը դէպի նոր արեւելում, դէպի քրիստոնեայ արեւմուտք կը մղէր: Սասանեան արքունիքը քաջ գիտակից էր այս իրադարձութեան, ուստի ան վճռած էր չդնել խտրութիւն միջոցին մէջ, Հայաստանի գէթ արեւելեան տարածքին վրայ չկորսնցնելու համար իր ազդու տիրակալութիւնը:*

## ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԻՃԱԿ

*Համառօտ գիծերու մէջ շահեկան է անդրադառնալ պատմական եղելութեան:*

*428 թուականին, 580 տարիներու շրջան մը բոլորելէ ետք, Արտաշիր արքայի գահընկեցութեամբ, կործանելով Հայոց Արշակունիներու թագաւորութիւնը եւ իր տիրապետութեան ենթակայ Հայաստանը վերածելով պարսկական մարզպանութեան, կը վարէ հայ ազնուականութեան, նախարարական տուներու ներքին ինքնավարութիւնը վերացնելու, հայ ժողովուրդի քրիստոնէական հաւատքը արգիլելու եւ զայն բռնի կրօնափոխ ընելու քաղաքականութիւն: Հոներուն դէմ տարած յաղթանակէ յետոյ, Յազկերտ Բ. յատուկ հրովարտակով մը կը հրամայէ իրեն ենթակայ բոլոր ազգերուն եւ պետութիւններուն ըլլալու կրօնափոխ եւ ընդունելու Զրադաշտականութիւնը:*

*Հայոց պետականութեան կորուստէն ետք, հեթանոսութեան փլատակներուն վրայ հետզհետէ ամրակալած Քրիստոնէութիւնը, Հայաստանի մէջ ընդամէնը 150 տարիներու եկեղեցիին ճամբով ծաւալած արգասաբեր առաքելութենէ վերջ, հայ ժողովուրդին համար դարձած էր ինքնութեան եւ մշակութային անկախութեան պահպանման կարեւոր ազդակ: Թերեւս քրիստոնեայ ազգերու պատմութեան մէջ հաւատքի եզակի վկայութիւն մըն է այն հաւաքական կուռ հաւատամքը, զոր խոստովանած են Վարդանանք, իբրեւ հաւատարմութեան ուխտ դէպի Ս. Աւետարանն ու Եկեղեցին.*

*«Քանզի հայր մեր զսուրբ Աւետարանն գիտեմք, եւ մայր՝ զառաքելական եկեղեցի կաթողիկէ, մի՛ ոք չար անջրպետ ի մէջ անկեալ՝ զմեզ քակեսցէ ի սմանէ» - «Քանզի մեզ հայր կը ճանչնանք Ս. Աւետարանը, եւ մայր՝ առաքելական կաթողիկէ եկեղեցին. թո՛ղ ոչ ոք իբրեւ չար անջրպետ մէջ իյնալով մեզ անկէ բաժնէ» (Եղիշէ):*

*Հայ մտաւորականութեան աշխարհական եւ հոգեւոր մարզերը, դեռ եւս քաղաքական կառոյցներու՝ նախարարական տուներու ներկայացուցիչները միանշանակ գիտակից էին, որ Յազկերտ Բ.ի հրովարտակը ոչ միայն ուղղուած էր Հայոց հաւատքին, այլ՝ ընդհանրապէս հայ ժողովուրդի ազգային գոյութեան դէմ:*

*449 թուականի սկիզբը Արտաշատի մէջ կը գումարուի հոգեւոր եւ աշխարհիկ ներկայացուցիչներու, ի մասնաւորի՝ մասնակցութեամբ Վասակ Սիւնիի եւ Վարդան Մամիկոնեանի ժողով մը, ուր միաձայնութեամբ կը մերժուի Յազկերտ Բ.ի կրօնափոխութեան հրամանը, եւ հաւաքաբար կը ստորագրուի մերժողական նամակ մը, սա պատմական յայտարարութեամբ.*

*«Այս հաւատքէն մեզ ոչ ոք կրնայ խախտել, ո՛չ հրեշտակները եւ ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը եւ ո՛չ հուրը, ո՛չ ջուրը եւ ոչ ալ որեւէ այլ դառն հարուած... Քու կողմէ տանջանք, իսկ մեր կողմէ յանձնառութիւն: Քու սուրդ եւ մեր պարանոցները»:*

*Իրականութեան մէջ, Արտաշատի ժողովի որոշումներուն իբրեւ արդիւնք, Յազկերտ Բ.ին ուղղուած Հայոց մերժողական այս պատմական նամակը, որուն բնագիրը Եղիշէ պատմիչ ամբողջութեամբ «Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին1» խորագիրը կրող իր պատմութեան մէջ ամբողջութեամբ տուած է, Հայոց կողմէ արդէն իսկ պատերազմի յայտարարութիւն մըն*

Շար.ը էջ 16

Ձմեռային
ԽՐԱԽՃԱՆՔ
եւ
ՁՈՒԿԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ՝
ԿԼԷՆՏԷՅԼԻ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ
ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

Շաբաթ, 25 Փետրուար 2012
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104

Տոմսերու համար դիմել՝ (818) 913-4024
ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ $25.00

# ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ ՎԱՐԴԱՆԱՆՑԻ ՄԱՍԻՆ

**ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ**

Դէպքեր կան մեր պատմութեան մէջ, որոնք ներշնչման անհատնում աղբիւր հանդիսացած են մեր ժողովուրդին համար, դիմագրաւելու եւ յաղթահարելու օրհասական կացութիւններ: Անկասկած Վարդանանցն ու Սարդարապատը այդ դէպքերու շարքին ամենէն նշանաւորներն են, որոնց տարուէ տարի յիշատակումը, անոնց խորհուրդները դարձուցած է հայ մարդու նկարագրի ու մտածելակերպի բնազդային յատկանիշերէն մին: Հետեւաբար, այսօրինակ դէպքերու որեւէ քննարկում կամ վերարժեւորում, միշտ ալ զգացմունքային գեղումներու եւ պոռթկումներու պատճառ կրնայ հանդիսանալ: Միեւնոյն ժամանակ, երբ դէպքին կապակցութեամբ անկայուն կամ հակասական տուեալներու կը հանդիպիս, ճշմարտութեան փնտռտուքը կը ստիպէ քեզ հարցադրումներ եւ վերարժեւորումներ կատարելու, միշտ առաջնորդուելով հայկական այն ասացուածքին իմաստութեամբ, որ գզուշանաս «յօնք շինելու տեղ աչք չհանել»: Ահա այսպիսի քննարկման փորձ մըն է այս յօդուածը, Վարդանանցի կարգ մը հանգամանքներուն վերաբերեալ, որոնք մեր մանկութիւնէն ի վեր լսած ենք մեր մեծերէն:

### ՅԱԶԿԵՐՏԻ ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Մեզի դասաւանդուած է, որ Պարսից Յազկերտ արքան 449 Թուականին հրովարտակ ուղարկեց Հայաստան, ստիպելով հայերուն որ կրօնափոխ ըլլան՝ հրաժարին քրիստոնէութիւնէ եւ ընդունին կրակապաշտութիւնը: Հայերը այս հրամանին ընդդիմանալով, ապստամբական շարժումներ ծաւալեցին, որոնք յանգեցան Աւարայրի ճակատամարտին: Հայերու մեծամասնութեան անծանօթ է, որ Աւարայրէն առնուազն վեց ամիսներ առաջ, 450Թ.ի աշնան, Հայաստանի մարզպան Վասակ Սիւնիի ջանքերուն շնորհիւ, Յազկերտ ետ քաշեց այդ հրովարտակը, ոչ միայն հայերուն քրիստոնէական պաշտամունքի ազատութիւն շնորհելով, այլ նաեւ Վրացիներուն, Աղուաններուն եւ նոյնիսկ բուն Պարսկաստանի մէջի քրիստոնեաներուն: Ուրեմն ինչո՞ւ ապստամբութիւնը կանգ չառաւ հոն: Որովհետեւ հայերուն մէջ երկպառակութիւն յառաջ եկաւ, որուն պատճառը կը պարզաբանենք քիչ ետք:

### ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԸ

Մեզի դասաւանդուած է, որ Վարդան Մամիկոնեանն է իր անունը կրող ապստամբական շարժման նախաձեռնողը: Վարդանանցի մասին երկու աղբիւրներ կան: Մին՝ Եղիշէի «Վարդանանց Պատմութիւնն» է, գրուած Դաւիթ Մամիկոնեան Երէցի պատուէրով, միւսն ալ Ղազար Փարպեցիի «Հայոց Պատմութիւնն» է, գրուած Վահան Մամիկոնեան մարզպանի պատուէրով: Առաջինը աւելի վիպասանական է, մինչ երկրորդը՝ պատմական: Ըստ Եղիշէի, ապստամբական շարժման նախաձեռնողը հայ եկեղեցին է, առաջնորդութեամբ Ղեւոնդ Երէցի: Ըստ Փարպեցիի, Վարդան Մամիկոնեանն է նախաձեռնողը: Բայց հետաքրքրական է, որ երբ կը կարդանք այս երկու աղբիւրներուն մէջ գրուած 452 Թ.ի Տիզբոնի դատավարութեան մասին, կը տեսնենք Թէ երկուքն ալ կը հակասեն իրենց պատմութեանց սկիզբի գրածներուն եւ կը ստացուի որ նախաձեռնողը ոչ այլ ոք էր, քան ... մարզպան Վասակ Սիւնին: Դատավարութեան ընթացքին, Վարդանի կողմնակիցները, որպէս իրենց խօսնակ, կ'ընտրեն Վարդանի փեսան՝ Արշաւիր Կամսարականը, ներկայացնելու իրենց Թեզը: Հոսկէ ի յայտ կու գայ, բերանացի Թէ գրաւոր փաստերով, որ հայ նախարարներու երեսանց խոստմնադրուժութիւնէն ետք, երբ Վարդան իր ընտանիքով կը լքէր Հայաստանը, Վասակը, իր մատանիով կնքուած Աւետարանով ու նամակով, Վարդանին կը համոզէ վերադառնալ նշելով Թէ. 1. Նամակ ուղարկած է Բիւզանդիոնի կայսեր, ապահովելու անոր աջակցութիւնը հայկական ապստամբութեան. 2. Նամակներ ուղարկած է նաեւ Վրացիներու, Աղուաններու, Աղցնիք եւ Անտիոքոս սպարապետին, ապահովելու անոնց աջակցութիւնն ալ. 3. Հայաստանի հարկերը իր քովն են եւ ինք անորմով կրնայ կաշառել Հոները որ նոյն ատեն ապստամբին պարսիկներու դէմ. 4. Իր պատանդ զաւակներուն դիմաց ինք կրնայ Հայաստան գտնուող պարսիկները կալանաւորել: Այսպիսով ան կը յաջողի համոզել Վարդանը, որ վերադառնայ եւ ստանձնէ հայկական բանակի հրամանատարութիւնը: Հոսկէ բացայայտ կը դառնայ Թէ ո՞վ էր շարժման կազմակերպիչ ուղեղը:

### ՎԱՍՆ ԿՐՕՆԻ ԹԷ՞ ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Մեզի դասաւանդուած է, որ Վարդանանցը կրօնքի եւ Հայաստանի ազատագրութեան պայքար է: Եթէ իրաւամբ այդպէս էր, ուրեմն ինչպէ՞ս բացատրել Եղիշէի հետեւեալ յիշատակումը՝ Արտաշատի 449 Թուի ժողովի պատասխանը Միհրներսեհ հազարապետին. «Մեր ամբողջ գոյքն ու ստացուածքը քո ձեռքումն են, եւ մեր մարմինները քո առաջն են. քո կամքի համաձայն արա՝, ինչ ուզում ես: Եթէ այս հաւատի մէջ Թողնես, Ո՛Չ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ՈՒՐԻՇ ՏԷՐ Կ'ԸՆԴՈՒՆԵՆՔ ՔՈ ՓՈԽԱՐԷՆ (ընդգծ. մեզմէ, ՅՏԴ) եւ ո՛չ էլ երկնքում ուրիշ Աստուած կ'ընդունենք Յիսուս Քրիստոսի փոխարէն ... Ահաւասիկ պատրաստ ենք՝ մեր ամբողջ մարմինը քո ձեռքը տուած. արա՝ շուտով՝ ինչ որ կամենում ես: Քո կողմից տանջանք, իսկ մեր կողմից յանձնառութիւն. ՔՈ ՍՈՒՐԸ ԵՒ ՄԵՐ ՊԱՐԱՆՈՑՆԵՐԸ (ընդգծ. մեզմէ, ՅՏԴ)»: Ի՞նչ ազատագրական պայքարի մասին է խօսքը, երբ մեր վիզերը կամովին կ'երկարենք Թշնամիի սուրին ընդառաջ: Այս կը նշանակէ, որ այդ ժամանակուան մեր եկեղեցական առաջնորդներուն համար, կրօնական ազատութիւնը աւելի գերադաս էր, քան՝ ազգային անկախութիւնը: Եկեղեցին հայութեան ապագան աւելի երաշխաւորուած կը տեսնէր որպէս կրօնական համայնք, քան որպէս պետական ինքնութիւն: Համայնքային մտածողութիւնը կը գերադասուէր պետական մտածողութիւնէն: «Վասն Հայրենեացը աւելի մօտիկ ժամանակներու, 19րդ դարու վերջի շեշտադրում է, երբ ազգայնական շարժումներու տարածման ազդեցութեան տակ, Վարդանանց շարժումն ալ նոր նշանակութիւն ստանալով «ազգայնացուեցաւ»: Մանաւանդ Օսմանեան Կայսրութեան տարածքին, ուր որպէս կրօնական համայնք, կրօնական տօներու յիշատակման ազատութեան քողին տակ, ազգայինն ալ ներառուեցաւ:

### ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ԹԷ՞ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Մեզի դասաւանդուած է, որ հայերը միասնական, համազգային պայքար մղեցին Պարսիկներու դէմ, բայց Աւարայրի ճակատամարտին, յանկարծ Վասակ Սիւնին Պարսիկներու կողմը անցնելով դաւաճանեց ընդհանուրին:

Երբ աւելի մօտէն կը սերտենք պատմութիւնը, կը տեսնենք որ մինչեւ Բիւզանդիոնի կայսր Թէոդոսի յանկարծամահ ըլլալը Յուլիս 28, 450ին, հայերը միակամ էին: Մարզպան Վասակ Սիւնին ապահոված էր անոր օգնութիւնը մեր ապստամբութեան: Բայց երբ անոր յաջորդած Մարկիանոսը ոչ միայն մերժեց օգնել, այլ նոյնիսկ այդ մասին տեղեակ պահեց Պարսիկներու Յազկերտ արքան, հայկական միասնականութիւնը պառակտուեցաւ: Վասակ Սիւնին եւ ազդեցիկ հայ նախարարներու մեծ խումբ մը, ինչպէս նաեւ մեծ Թիւով հոգեւորականներ, արկածախնդրական համարեցին ապստամբութեան շարունակութիւնը: Մանաւանդ որ 450ի ամռան Փայտակարանի մէջ պարսից հազարապետ Միհրներսեհի եւ հայոց մարզպան Վասակ Սիւնիի միջեւ արդէն համաձայնութիւն գոյացած էր, որ Յազկերտը դաւանանքի ազատութիւն կը շնորհէ հայերուն, զանոնք կը ներէ մոգերու սպանութեանց եւ ատրուշաններու քանդումներուն համար, կը Թեթեւցընէ 447Թուին իր լիազօր Դենշապուհի պարտադրած տուրքերը, Հայոց Այրուձին պահելու ծախսերը կը հոգայ, եւ պատրաստ է Սասանեան կայսրութեան կազմին մէջ վերականգնելու հայոց Թագաւորութիւնը, զոր վերացուցած էին 428Թուին: Սակայն եկեղեցին, առաջնորդութեամբ Ղեւոնդ Երէցի եւ Յովսէփ կաթողիկոսի, Վարդան Մամիկոնեանը եւ կարգ մը այլ նախարարներ, որոշեցին շարունակել պայքարը: Ինչո՞ւ: Որովհետեւ 1. ըստ Եղիշէի, հաւատք չընծայեցին այդ խոստումներուն, 2. Եկեղեցիէն խլուած իրաւունքները ամբողջութեամբ չվերականգնուեցան եւ 3. Եկեղեցին կ'ուզէր հայկական գահի վրայ տեսնել Մամիկոնեանները, որոնց հետ խնամիական կապ ունէր, եւ ոչ Թէ Հայաստանի Թիւ մէկ նախարարական տունը՝ Սիւնիները: (Այս վերջին կէտը մասամբ պիտի յաջողուէր 487Թուին Վահան Մամիկոնեանի մարզպան նշանակութեամբ): Այս պատճառաւ 450ի ամառուան վերջէն կամ աշունէն մինչեւ Աւարայրի ճակատամարտ (Մայիս 26, 451), Հայաստանը Թատերաբեմ հանդիսացաւ քաղաքացիական պատերազմի: Եղիշէն կը նշէ եկեղեցւոյ առաջնորդներու հետեւեալ կոչը. «Հարազատ եղբօր ձեռքը Թող բարձրանայ այն մերձաւորի դէմ, որ դուրս է եկել Աստծու պատուիրանի ուխտից. հայրը չխնայի որդուն եւ որդին չակնածի հօր պատուից: Կինը կռուի իր ամուսնու հետ եւ ծառան դիմադրի իր տիրոջը: Աստուածային օրէնքը Թագաւորի ամէն բանում ...» Վասակ Սիւնին ալ, որպէս երկրի մարզպան եւ ղեկավար, սկիզբը փորձեց բանակցութեամբ լուծման մը յանգիլ այս խումբին հետ, բայց երբ չյաջողեցաւ, պայքարեցաւ անոնց դէմ: Հայաստանի այս խառնակ վիճակը Պարսկաստանի հաշւոյն չէր գար, որովհետեւ ոչ միայն տարածաշրջանին մէջ անկայունութիւն կը ստեղծէր, այլ նաեւ ան կը զրկուէր տուրքերու գանձումներէ, զինուորագիրներէ եւայլն: Այս բոլորը յանգեցան Աւարայրի ճակատամարտին, ուր պարսկական բանակը Վասակ Սիւնիի եւ իր կողմնակիցներու հետ միասին, պայքարեցաւ եկեղեցւոյ, Վարդան Մամիկոնեանի եւ անոր կողմնակիցներուն դէմ: Եթէ պայքարը հայերու եւ պարսիկներու միջեւ եղած ըլլար, ի՞նչը կ'արգիլէր պարսիկներուն, որ իրենց յաղթանակէն ետք ներխուժելով Հայաստան, չաւերէին եւ չկոտորէին մեծ Թիւով հայեր: Ինչո՞ւ Արտաշատի ժողովին մասնակից 18 եպիսկոպոսներէն միայն 4ը կալանաւոր տարուեցան եւ մահուան դատապարտուեցան: Ինչո՞ւ ոչ մէկ նախարար մահուան չդատապարտուեցաւ: Կ'արժէ նշել որ մեծ ու փոքր 70 նախարարական տուներէն մօտ 50ը չէզոք դիրք բռնած էին այս քաղաքացիական պատերազմի ընթացքին, իսկ կային տուներ որոնք երկփեղկուած էին հակադիր բանակներու մէջ:

Բաւականանք այս գլխաւոր չորս հարցադրումներով, որպէս զի աւելի չի ծանրաբեռնենք մեր այս

Շար.ը էջ 16



# ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ. ՀԱՅ ՄԵԾ ՄԱՆԿԱՎԱՐԺՆ ՈՒ ԳՐՈՂԸ, ՈՐ ՆՈՐ ՇՈՒՆՉ ՏՈՒԵՑ ՀԵՔԻԱԹՆԵՐԻՆ



*Մանկութեանս տարիներին սեղանիս վրայ մշտապէս դրուած էր հայկական հեքիաթների նկարազարդ գիրքը, որտեղ մօրուսով ծերունու լուսանկարն էր առաջին էջում, եւ գրուած էր Ղազարոս Աղայեան: Հասուն տարիքում ծանօթանալով Աղայեանի կենսագրութեանը՝ ինձ համար ակնյայտ դարձաւ վերջինիս նշանակալից աւանդը հայ գրականութեան, ինչպէս նաեւ մանկավարժութեան զարգացման գործում:*

*Ղազարոս Ստեփանի Աղայեանը ծնուել է Ապրիլի 4-ին ժամանակակից Վրաստանում գտնուող Բոլնիս-Խաչէն հայաբնակ գիւղում: Նախնական կրթութիւնը ստացել է ծննդավայրում՝ Շամշուլդա գիւղի քահանայ Տէր-Պետրոսի մօտ: 1853 թուականին Ղազարոս ընդունուել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը, սակայն մէկ տարի անց ինքնակամ հեռացել այնտեղից՝ զբաղուելով ինքնակրթութեամբ:*

*Հարկ է նշել, որ տաղանդաշատ գրողը սկզբնական շրջանում հարկադրուած է եղել աշխատել՝ որպէս գրաշար (Մոսկուայում, Թիֆլիսում, Պետերբուրգում), ապա վերադարձել է Անդրկովկաս՝ պաշտօնավարելով՝ որպէս Էջմիածնի տպարանի կառավարիչ, այնուհետեւ զբաղուել է «Արարատ» ամսագրի խմբագրութեամբ:*

*Իր կեանքի զգալի մի հատուած նուիրել է մանկավարժութեանն ու մանկավարժութեան հիմունքների մշակմանը: Աղայեանը դասաւանդել է Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Շուշիի, Երեւանի դպրոցներում, եղել Վրաստանի եւ Իմերեթիայի հայկական դպրոցների թեմական տեսուչ: Յաւելեմ, որ Ղազարոսն աշխատել է նաեւ «Փորձ» հանդէսի խմբագրութիւնում, այնուհետեւ խմբագրել մասնակցութիւն ցուցաբերել «Աղբիւր» մանկական պատկերազարդ ամսագիրը: 1895-ին ձերբակալուել է Հնչակեան կուսակցութեանը պատկանելու մեղադրանքով, ինչի արդիւնքում էր աքսորուել Դոնի Ռոստով, ապա՝ Ղրիմ: Աղայեանը մինչ իր կեանքի վերջը եղել է ցարական ժանդարմերիայի խիստ հսկողութեան ներքոյ:*

*Ղազարոս Աղայեանը բացառիկ ներդրում ունի հայ ժողովրդին լուսաւորելու եւ սերունդներին ճիշտ դաստիարակելու անձնուէր գործին: Աղայեանը՝ որպէս մանկավարժութեան տեսաբան, մշակել է ինքնատիպ մանկավարժական համակարգ, որի գերակայ նպատակն էր զարգացնել «ուժեղ, խելացի, առաքինի» քաղաքացիներ: Կարեւորագոյն նորարարութիւնը կայանում էր նրանում, որ առաջնութիւնը տրւում էր հայոց լեզուի ուսուցմանը, բարոյական եւ գեղագիտական դաստիարակութեանը, մանկավարժը կտրականապէս դէմ էր իր օրօք մեծ տարածում ունեցող մարմնական պատիժներին: Նա առաջինն էր հայ իրականութեան մէջ, որ երկսեռ՝ աղջիկների եւ տղաների համատեղ ուսուցման հարցը բարձրացրեց: Աչքի են ընկնում նրա «Ուսումն մայրենի լեզուի»՝ առաջինից չորրորդ տարիների համար նախատեսուած դասագրքերը, որոնցից առաջինը շուրջ 40 տարի (1875-1916) եղել է ամենատարածուած այբբենարանը հայկական դպրոցներում:*

*Բազմաշնորհ արուեստագէտի հեղինակած «Արութիւն եւ Մանուէլ»-ով (1867) հիմք դրուեց ինքնակենսագրական վէպի ժանրին հայ նոր գրականութեան մէջ: Նրա գրչին է պատկանում նաեւ «Տորք Անգեղ» վէպը, «Սրինգ հովուական» բանաստեղծութիւնների ժողովածուն, դասականների գործերի մի շարք յաջողուած թարգմանութիւններ, այնուհանդերձ, նրա գործունէութիւնն առաւել յատկանշական է հեքիաթների հրատարակմամբ, որոնցից «Անահիտ»ը (1881) հայ հեքիաթագրութեան լաւագոյն նմուշներից է:*

*Աղայեանը մահացել է 1911 թ. Յունիսի 20-ին, Թիֆլիսում:*

**Քաղուած է blog.liberal.am**

# ՏԽՈՒՐ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

## (ԳՐՈՒԱԾ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՒ)



*Ղազարոս Աղայեան վերնատան մի շարք գրողների հետ. առաջին շարքում Աւ. Իսահակեանը, Ղ. Աղաեանը, Յովհ. Թումանեանը. կանգնած են՝ Լ. Շանթը եւ Դ. Դեմիրճեանը*

*ՀԵՂԻՆԱԿ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ*

*Ուղիղ մի տարի առաջ՝ մին էլ այսօր էր, որ նա դարձաւ յիշողութիւն: Մենք էլ յիշողութիւններ կը գրենք: Ուրիշ ի՞նչ կարող է անել մեր մարդկային ապիկարութեանը ամենազօր մահուան հանդէպ:*

*Սակայն այսօր, նրա մահուան առաջին տարեդարձին ես այն չեմ պատմելու, թէ ինչ զգացմունքով էինք կապուած մենք կեանքում ու ինչ օրեր անցկացրինք, ոչ էլ նրանից եմ խօսելու, թէ ինչ եղաւ նրա մահն ինձ համար, այլ յիշատակելու եմ մի երկու տարօրինակ դէպք: Տարօրինակ եմ ասում, որովհետեւ սովորաբար տարօրինակ են համարւում, թէ չէ մենք այդ տեսակ դէպքերը ընդունում էինք որպէս սովորական ու բնական երեւոյթներ:*

*Մենք յաճախ խօսում էինք բնութեան ու կեանքի գաղտնի ուժերից, որ տկաւին մարդը չի ճանաչում ու չի գիտակցում պարզօրէն: Խօսում էինք եւ հոգիների փոխադարձ հաղորդակցութեան ընդունակութիւնից, որ տարածութիւն չեն ճանաչում եւ ազդում են ամէն տեղ ու ամեն հանգամանքում, բայց միայն նուրբ բնութեան տէր մարդիկն են զգում ու հասկանում: Եւ մեր մէջ՝ համարելով մեզ էլ այդ տեսակի մարդիկ՝ շատ դէպքեր էինք բերում մեր կեանքից:*

*Ահա այդ դէպքերից երկուսը, մինը՝ թէ ինչպէս նա ինձ տեսաւ վտանգի մէջ, միւսը՝ թէ ինչպէս ես տեսայ նրա մահը:*

*Սրանից տասը տարի առաջ, 1902 թուականին, ես Թիֆլիսի Հայոց Ազգագրական Ընկերութեան խմբագրութեան մասնաժողովի մէջ էի: Գարնանը մի գիշեր, երբ հաւաքուել էինք խմբագրական մասնաժողովի նիստին, մի անակնկալից ես յանկարծ ընկայ: Կէս գիշերին ինձ բերին մեր տունը: Դրութիւնս այդ գիշեր սաստիկ ծանրացաւ, բայց, իհարկէ, այդ ժամին ամէնքը քնած էին ու ոչ ոք էլ բան չէր կարող իմանալ: Գիշերուայ մի ժամին մեր զանգը տուին: Գնացին, եկան, թէ՝*

*Աղայեանն է կանգնած ներքեւը մթնում, քեզ է հարցնում: Դուրս եկայ հարցնեմ՝ ինչ կայ, ինչ է պատահել:*

*Դէ լա՛ւ, լա՛ւ... յետոյ... Ձայն տուեց ներքեւից ու գնաց: Առաւօտը եկաւ, դէմս կանգնեց ու զարմանք յայտնեց, թէ ինչպէս է, որ ես կենդանի եմ: Պատմեց ու նկարագրեց, նկարագրեց ամենայն ճշտութեամբ, թէ ինչ դրութեան մէջ էր տեսել ինձ գիշերը: Նրա համար էր վախեցել ու եկել անժամանակ, համոզուած, որ ինձ, անպատճառ մի դժբախտութեան է պատահել եւ զարմանում է, որ ոչինչ չի պատահել:*

*Ես եղածը ծածկեցի նրանից մինչեւ մի քանի օր անցաւ:*

*Մի ուրիշ անգամ ես տեսայ նրան: Տեսայ, թէ ինչ պատահեց նրա հետ, ես էլ վախեցած շտապեցի նրա մօտ, բայց այլեւս չէի կարող նրան պատմել...*

*Այդ անցեալ տարի, ուղիղ մին էլ այսօր, Յունիսի 20-ի առաւօտն էր: Մի տօթ առաւօտ էր: Ժամը 9-ից նոր էր անցել:*

*Նստած էի գրասեղանի առաջ ու միտք էի անում:*

*Այս խաղաղ մտորման ժամին յանկարծ առաջս փայլատակեց մի պատկեր, մի կենդանի ու զարհուրելի պատկեր... Ղազարոսն առջեւս գետին տապալուեց... մեռաւ...*

*Այս պատկերը կայծակի արագութեամբ, աւելի վառ, քան իրականութիւնը, եկաւ ու անցաւ մի անսպասելի ծանր հարուածի պէս եւ այնպէս տակն ու վրայ արաւ, որ ցաւի ու շփոթութեան մէջ սկսեցի մօտիկ բարեկամների անունները որոնել, թէ ո՞րտեղ են, որ հեռագրենք... Մի կերպ աշխատեցի ինձ յաղթանակել, յուզմունքս զսպել. վեր կացայ, սկսեցի սենեակումս շրջել, բայց չէի կարողանում ինձ տիրել: Այս ժամանակ ներս է մտնում կինս ու տեսնելով ինձ այդ դրութեան մէջ, զարմացած հարցնում է՝ թէ ի՞նչ է պատահել: Պատմում եմ, թէ այս տեսակ մի յիմար բան է մտել գլուխս ու չեմ կարողանում ազատուեմ: Նա ծիծաղում է վրէս ու յանդիմանում: Սկսում է խօսել ուրիշ բանից: Հենց այս խօսակցութեան միջոցին փողոցից ներս է ընկնում գունաթափ որդիս...*

*Պապէն ընկաւ...*

*Ո՞րտեղ...*

*Փողոցում...*

*Ի՞նչպէս թէ ընկաւ...*

*Ուշաթափուեց... տարան տուն... բժիշկները ետեւից են վազում...*

*Վազում եմ: Նրա տանից մօտ*

*Շար.ը էջ 16*





**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**

**«Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

# Massis Weekly

Volume 32, No. 06 Saturday, FEBRUARY 25, 2012


## Collective Security Treaty Organization to Act Against 'Chaos' In Member States

MOSCOW -- The Collective Security Treaty Organization (CSTO) will intervene to restore "law and order" if one of its members, including Armenia, is beset by serious unrest, the secretary general of Russian-led alliance of seven ex-Soviet states confirmed on Tuesday.

"This is an agreement that was reached by the presidents at their informal summit in Astana [last August,]" Nikolay Bordyuzha told journalists in a live video link from Moscow.

"We discussed mechanisms that are needed for cases where the authorities, law-enforcement bodies of a particular country cannot control the situation, when there is chaos, mass disturbances, looting and it is not possible to control the situation at the national level," he said.

Bordyuzha explained that such intervention would not necessarily take the form of joint military action. The CSTO would primarily rely on its "political and peacekeeping potential," he said without elaborating.

Aleksandr Lukashenko, the controversial president of CSTO member Belarus, discussed the issue with Bordyuzha last year. Lukashenko, who tolerates little dissent at home, reportedly called for the alliance members to jointly suppress possible attempts by domestic opposition groups to stage a "constitutional coup."

Bordyuzha insisted in that regard that the CSTO is not assuming "gendarmerie functions" to help the ruling regimes in the member states crack down on the opposition. He said it would only respond to "chaotic situations" in order to "protect citizens and restore law and order."

## US Congressional Delegation Visiting Armenia



US Congressional Delegation members with president Serzh Sarkisian

YEREVAN -- A 15-member Congressional Delegation from the U.S. House of Representatives headed by Chairman David Dreier met with President Serzh Sarkisian and Speaker of Parliament Samvel Nikoian on February 19. President Sarkisian hosted a dinner for the delegation, which included five members of the U.S. House of Representatives, and Ambassador John Heffern.

According to a press release by the US Embassy, Congressman Dreier, Chair of the House Democracy Partnership, highlighted the importance of the upcoming parliamentary elections to the bilateral relationship and urged the government and all the political parties to "do everything in their power to ensure free, fair, and credible elections." The delegation expressed interest in developing closer ties between the National Assembly and the US Congress.

The Congressmen visited Armenia as representatives of the House Democracy Partnership (HDP), which is a bipartisan, 20-member commission established by the U.S. House of Representatives in 2005 to support the devel-

Continued on page 3

## Controversial Yerevan Park Construction Suspended Amid Protests by Environment Protection Groups



YEREVAN -- Authorities in Yerevan suspended the controversial construction of shops in a public park in central Yerevan on Wednesday after almost two weeks of daily demonstrations staged by environment protection and other civic groups.

Officials said no further construction work will be carried out there until the end of this week.

"Suspension is a legal category, don't use that word," Karen Movsisian, a senior officer from Yerevan's police department, told RFE/RL's Armenian service (Azatutyun.am). "[Construction] has simply been stopped. They are simply given time to do things in a legal manner."

Movsisian did not elaborate. In a statement issued on Tuesday, the police offered to hold a roundtable discussion with relevant civic groups on "the legal grounds for the police actions" against mostly young activists who have been trying to halt the shop construction.

In what they consider an attempt to save more green areas in the Armenian capital from destruction, the protesters have repeatedly blocked the construction, forcing builders to work overnight and request police protection. Police presence in the Mashtots Park was especially strong on Tuesday.

Only a handful of police officers guarded the construction site on Wednesday as it continued to be picketed by several dozen activists. Organizers of the protests were distrustful of the construction suspension announced by the police.

"Our actions threatened to gain a huge resonance. That is why [the authorities] realized that it's wrong to press us or let this movement gain momentum," Mariam Sukhudian, a prominent environmental activist, told RFE/RL's Armenian service.

"We will keep coming to the park every day just as we have in the last 12 days," she said.

## Turkish Presidential Report Calls for New Trial in Dink Murder Plot

ANKARA -- Negligence by Turkish state officials led to the 2007 killing of prominent Turkish-Armenian journalist Hrant Dink, and a flawed murder investigation undermined public trust in the security services, a report commissioned by the president of Turkey has concluded.

The Turkish Presidency's State Supervisory Council on Monday recommended that top police and gendarmerie officials be prosecuted due to their alleged negligence.

Security officials failed to protect Dink despite warnings of a plot to kill him and the subsequent legal process exposed widespread structural problems and the need for reforms, the report said.

Last month, an Istanbul court sentenced a man to life in prison for Dink's murder but acquitted 17 other defendants, sparking large protests and criticism from rights groups.

\The investigation into the murder of Dink, former editor of the bilingual Turkish-Armenian weekly Agos and Turkey's best known Armenian voice abroad, was viewed as a test of democracy and human rights in European Union candidate Turkey.



President Abdullah Gul ordered Turkey's State Supervisory Council (DDK) to investigate the case following accusations from Dink's family, lawyers and rights groups that state officials had been complicit in the murder.

In a 650-page report, the conclusion of which was posted on the president's website late on Monday, the DDK said security forces failed to act on tip-offs about a plan to murder Dink and called for the negligent officials to be investigated and tried.

It said the way the case had been

Continued on page 4

# EU Launches Free Trade Negotiations with Armenia

BRUSSELS -- The European Union on Monday decided to launch negotiations on a deep and comprehensive free trade area with Armenia in order to boost economic growth and investment with the Eastern European Partner.

The negotiations will cover matters that have become crucial to a modern, transparent and predictable trade and investment environment. They will not only tackle market access conditions but also focus on regulatory approximation, which will help achieve a closer economic integration of Armenia with the EU.

"The opening of free trade negotiations mark a turning point in our trade relations with Armenia. We are entering a new phase that will bring our economic ties to a new level of depth and ambition," said EU Trade Commissioner Karel De Gucht. "The EU is Armenia's first trading partner and a deep and comprehensive free trade area will give Armenia a more favorable access to the European single market thereby helping to boost economic growth in the country," he added.

Commissioner for Enlargement & European Neighbourhood Policy



Štefan Füle said: "This is a further sign of the strengthening of our political and economic ties. Launching DCFTA negotiations is one more step towards closer economic integration which is one of the cornerstones of our relations with countries of Eastern Partnership."

The free trade area will be part of the broader Association Agreement which has been negotiated with Armenia since July 2010, in the framework of the Eastern Partnership and the European Neighborhood Policy.

The European Commission said that a free trade area was expected to diversify and strengthen Armenia's export capacity and effectively open the way to access the EU market of 500 million consumers.

Armenia needs to continue its work toward reaching a stable, trans-

# Franz Werfel Stamp Issued by Raoul Wallenberg Foundation




JERUSALEM -- The International Raoul Wallenberg Foundation is dedicated to develop educational programs and public awareness campaigns on the Saviors of the Holocaust. It is named after Swedish diplomat Raoul Wallenberg missing since January 1945 after saving the lives of tens of thousands of Jews and other persecuted during World War II..

The Foundation has issued new commemorative stamp dedicated to the memory and literary legacy of Franz Werfel.

Franz Werfel (1890-1945), Austrian poet, modernist playwright, and novelist, was born in Prague, the son of a Jewish merchant. During World War I, Werfel served for several years on the Russian front as a soldier in the Austrian army. A friend of authors Max Brod and Franz Kafka, Werfel later moved to Vienna and Berlin. He was forced to leave the Prussian Academy of the Arts in 1933. His 1933 novel, Die vierzig Tage des Musa Dagh (The Forty Days of Musa Dagh), detailed the mass murder and expulsion of Armenians from eastern Anatolia in 1915 and received much attention in the United States. It stood as a warning against future acts of mass murder and won lasting respect from Armenian communities throughout the world.

Werfel's books were burned by the Nazis as those of a Jewish author who advocated pacifism, love for all mankind, and hostility to extreme nationalism and Nazism. Werfel had to flee Austria after the German annexation. He then escaped from France by hiding in the Catholic sanctuary of Lourdes, crossing the Pyrenees on foot to safety in Spain, and leaving from there for the United States. With gratitude for his sanctuary at Lourdes in mind, he wrote the best-selling novel, The Song of Bernadette. Though he remained a Jew all of his life, Werfel was attracted to many aspects of Catholicism.

# Independence and Recognition: Int'l Conference in Stepanakert Discusses Prospects of Karabakh's Statehood

**By Naira Hayrumyan**
**ArmeniaNow.com**

Last weekend Stepanakert saw a two-day international conference entitled "The 20th Anniversary of NKR's Independence: Realities and Prospects", which was attended by lawmakers and political scientists from Karabakh and Armenia, representatives of the expert communities from Russia, Germany, the United Kingdom, Poland, Greece, the Netherlands. The official delegation at the conference from Armenia was led by Deputy Speaker of the Armenian Parliament Eduard Sharmazanov.

The main message of the conference was the statement delivered by the chief editor of the Russian news agency REGNUM, well-known Russian political consultant Modest Kolerov: "I do not agree that the more an independent state exists [de facto], the more objective arguments it has for independence [de jure]. It makes no sense to demand that the world recognize the independence of Karabakh until Armenia does so."

In response, Sharmazanov said that Armenia's goal is to achieve an international recognition of Nagorno-Karabakh. "If a unilateral recognition by Armenia will help in this matter, we will make this step. But everything has its time."

According to the chairman of the NKR parliamentary commission on foreign policy affairs Vahram Atanesyan, the modern world does not suggest an order by which Nagorno-Karabakh can peacefully exist within Azerbaijan. "The incompatible cannot be combined. The West and the East are incompatible, and now this boundary passes along the border between Nagorno-Karabakh and Azerbaijan," said the Karabakhi lawmaker.

The conference took place against the background of a political controversy surrounding a recent interview by NKR President Bako Sahakyan to one of the Greek-language Armenian newspapers. Responding to a question about the limits of concessions from the Armenian side, Sahakyan said that the matter did not concern unilateral concessions, but rather a compromise and that everything would be done without any damage to the interests of the Armenian side.

This caused a flurry of discussions on online social networking sites and in the mainstream media. Armenian political analyst Sergey Shakaryants said that the president of Karabakh should not talk about possible concessions at all. Chairman of the European Integration of Artsakh NGO Hayk Khanumyan published an article in which he called Sahakyan a "driving force behind capitulation".

Chairman of the NKR Public Council for Foreign Policy and Security Masis Mailyan also believes that neither Armenia nor Nagorno-Karabakh should be discussing the issue of territories. "The Armenian sides should not be tricked by official Baku that often refers to the recognition of the Azerbaijani Republic ostensibly within 'internationally recognized borders'. "Despite the fact that the Azerbaijani Republic was internationally recognized 20 years ago, it was only recently that the Azerbaijani-Russian border was determined. The process of delimitation and demarcation of the Azeri-Georgian border and the Azerbaijani-Iranian maritime border is still continuing, and the status of the Caspian Sea itself has not been defined. And the process of defining the borders between Azerbaijan and Nagorno-Karabakh, Azerbaijan and Armenia have not started at all in view of the lack of diplomatic relations between the two countries."

# Government Bill On Emergency Rule Withdrawn From Parliament

YEREVAN -- The Armenian government on Wednesday unexpectedly withdrew from parliament a controversial bill which opposition politicians say would make it easier for the authorities to use the army for quelling street protests.

Prime Minister Tigran Sarkisian asked parliament speaker Samvel Nikoyan to remove the draft law regulating introduction of state of emergency from the National Assembly agenda just two weeks after it was passed in the first reading.

Sarkisian's spokesman, Aram Ananian, told RFE/RL's Armenian service (Azatutyun.am) that the bill will undergo changes before being again sent to the parliament. He declined to comment on those changes.

The bill stipulates that the president of the republic can call a state of emergency in case of an "immediate danger to constitutional order," including attempts to forcibly seize power, terrorism and "mass disturbances." It allows the head of state to turn to the armed forces for help if police and other security forces are unable to enforce emergency rule. In that case, military personnel would be allowed to use riot equipment and live ammunition in accordance with an Armenian law on the police.

Opposition groups and the Zharangutyun (Heritage) party in particular have expressed serious concern over the proposed legislation. They claim that the authorities are keen to create more legal grounds for the use of lethal force against the opposition ahead of next May's parliamentary elections. They say the armed forces should on the contrary be banned from any intervention in political processes.

The government and its loyal majority in the parliament have dismissed the opposition claims.

Armen Martirosian, a Zharangutyun deputy, suggested two reasons for the government's decision to withdraw the bill. "First of all, the issue of the army's involvement has had a lot of resonance and even a deputy from the ruling [HHK] party, Rafik Petrosian, was against it because it clearly contradicts our constitution," he told RFE/RL's Armenian service (Azatutyun.am).

Martirosian also pointed out that the bill was passed because several HHK deputies voted in place of their absent colleagues in breach of the National Assembly statutes. The government is now keen to stop its political opponents questioning the legality of the bill's adoption, he said.

Armenian army units were ordered into central Yerevan on two occasions in the past, most recently in the aftermath of the February 2008 presidential election that saw deadly clashes between security forces and opposition protesters [read: state-sponsored slaughter and military coup]. Ten people were killed and more than 200 others injured on March 1-2, 2008.

## How Will the Canadian Museum for Human Rights Represent Genocide?

Statement by the International Institute for Genocide and Human Rights Issues (A Division of the Zoryan Institute) on the Canadian Museum for Human Rights



TORONTO -- The International Institute for Genocide and Human Rights Studies (A Division of the Zoryan Institute) ("IIGHRS-Zoryan") was invited to a public gathering in Winnipeg by the Canadian Museum for Human Rights ("CMHR") in April 2003, after an initial meeting with Gail Asper in Toronto. As a Canadian institution, we lent our name publicly in support of the CMHR at an early stage.

Our early enthusiasm diminished over time, owing to the politics surrounding the museum. Owing to such politics, we still have no idea how the Armenian Genocide and other cases will be represented in the CMHR. The IIGHRS-Zoryan made a detailed presentation to CMHR officials in December 2009, as part of its public consultation, on how to represent genocide in general, and the Armenian Genocide in particular. When we found that the public consultations were not being taken into consideration by museum officials, and there was an outcry from various communities about what they felt was unfair treatment, we subsequently issued two public statements on this issue in February and August 2011, and wrote directly to Stuart Murray, the museum's President and Chief Executive Officer. None of the points have been dealt with by the CMHR, nor has our letter been responded to.

The essence of the arguments is as follows.

The lack of responsiveness of the CMHR and the absence of information about how cases of the gross violation of human rights will be represented raise questions as to which cases will be included, how much space will be allotted to each case, what their content will be, if they will have a permanent or only temporary exhibit, and how these decisions are made. Moreover, there is a close relationship between the gross violation of human rights and genocide that is being neglected in the museum's planning. Unless we study such cases comparatively, the lessons that can be learned are of limited value, particularly with a view to the prevention of such cases.

In trying to fend off criticism from various community groups over its handling of these issues, the CMHR posted a statement on its website, originally appearing as a letter in the Globe & Mail on March 23, 2011, that the museum is not about genocide and never was. The August 2011 IIGHRS-Zoryan editorial rebutted this with explicit statements to the contrary from the museum's own publicity. The editorial also argued the benefits of studying the known cases of genocide on a comparative basis. Finally, the editorial pointed out that as a federal institution, the CMHR was legally required to adhere to the official Canadian policy of multiculturalism, which is to integrate all citizens into Canadian society and treat them fairly and equally.

We recently learned from Armenian community representatives that the museum will include the five genocides officially recognized by Canada's Parliament, including the Armenian Genocide, but we still do not know how they will be represented or how the CMHR will deal with the fundamental questions raised in our two public statements. It seems that the CHMR is playing community politics by contacting different groups at different times, while ignoring the challenging questions raised by an institute whose mission is the study of these very issues. We raise these issues today to make the Armenian community aware of what has transpired over the past eight years. The IIGHRS-Zoryan calls upon the Armenian community of Canada to speak with one voice and to demand answers to these questions, for which we have been awaiting an answer for a long time.

The arguments can be read in detail on the IIGHRS-Zoryan website, at www.genocidestudies.org/Announcements/How%20Genocide%20Should%20be%20Represented%20in%20the%20CMHR%20v20.pdf and http://www.genocidestudies.org/Announcements/Genocide%20Multiculturalism%20and%20the%20CMHR.pdf

## Armenia Has a Unique Chance



**By Naira Hayrumyan**

The crisis of the global governance threatens to escalate into a serious conflict, and the leaders of the great powers are trying to find a solution.

The informal summit of the foreign ministers of G 20 is underway in the Mexican town of Los Cabos. The main issue is global governance.

Nothing is known about the results of the discussion but it is evident that the world is trying to review a number of key issues. One of these issues is 1% population which owns 30-50% of world goods. The global politics is based on the needs of this 1%, they have concentrated in their hands almost all the financial resource, keeping the remaining 99% in captivity. It has been possible to sustain the world population at a tolerable social level for several decades, but now that the world population is growing, and the shortage of food and fuel is becoming an issue, the population demands social justice.

This issue is especially urgent in the U.S. while the election campaign is underway. Representative Ron Paul who is running in the primaries made a sensational statement: "We've slipped away from a true Republic. Now we're slipping into a fascist system where it's a combination of government and big business and authoritarian rule and the suppression of the individual rights of each and every American citizen."

Such statements by possible U.S. presidential candidates evidence that the era of "democratic majority" is coming to end. The world has so far been artificially divided into two large parties which shared their stances, and decisions were taken proceeding from the opinion of the majority even if it was 51%.

This system is exhausted and now the world needs to take into account the opinion of the 99% of the population. The concept of public interest is becoming dominant, and people more often wonder whose interests the government defends, 1% or the major part of the population.

These issues are highly relevant in Armenia where now civic engagement is awakening, where the government is asked questions about whether it should protect the interests of the business or the public.

Armenia is the witness of the crisis of the current economic management in transitional countries but it is moving by inertia towards the collapse of the system. We keep borrowing money from international organizations, becoming the hostage of capital trying, to build the democratic system of majority which is no longer trusted in the West.

It is noteworthy that Russia is walking against the stream. Putin stated that strategic control will continue until it enables the world capital fill Russia. Pro-Putin experts note as his positive feature that he does not want to be part of the global power of capital, imperialism. But what does he propose in return? What a new system of values does he propose? Is it only restoration of Soviet socialism and military state?

Armenia may work out its own approach to reforms of global governance, insisting on the reduction of financial dependence on the West and weakening of Russian bondage regarding security issues. And most importantly, Armenia may form a government, proceeding from the interests of 100% and not 1% of the population. This may seem utopia but all the other ways lead to a catastrophe, like in the case of Greece, which is deciding now to be or not to be part of global financial management.

Lragir.am

## US Congressional Delegation Visiting Armenia

**Continued from page 1**

opment of independent, democratic legislatures. The HDP seeks to build the capacity of its partner legislatures in key areas such as legislative oversight, budget analysis, committee operations, constituent relations, and library and research services, using peer-to-peer exchange programs, training seminars for members and staff, and targeted material assistance. This was the second visit of the HDP to Armenia.

The Delegation includes Rep. David Dreier (R-CA); Rep. James Moran (D-VA); Rep. Joe Wilson (R-SC); Rep. Adrian Smith (R-NE); Rep. Kenny Marchant (R-TX); Reverend Patrick Conroy, Chaplain of the House of Representatives; and staff.

## Armenia Fund Starts Construction of Vocational School in Shushi



YEREVAN -- The Hayastan All-Armenian Fund's French affiliate has launched the construction of a vocational school in Nagorno Karabakh's city of Shushi.

According to a press release by the fund, the future institution will be named after French-Armenian benefactor Yeznik Mozian, whose bequest has provided the necessary funds for the project.

With a total area of 4,050 square meters, the future school will accommodate up to 225 students. It will offer a three-year certificate program in various specialties as well as a broad spectrum of general academic subjects.

The two-story campus will feature all required amenities including fully appointed classrooms, workshops, labs, and a library. The facility will also be equipped with central heating and air-conditioning, and comprise storage space for educational materials. Currently construction crews are laying the building's foundations.

"On the model and standards of similar French professional institutions our architects and consultants have designed this school to practice the most effective educational methods. School professors and instructors will be selected and trained accordingly", said the Mozian family representative Robert Aydabirian, who is the overall project coordinator.

Graduates of the Yeznik Mozian School -who will be certified variously as locksmiths, metalworkers, welder, casing worker, mason, painters, roofers, stuccoer, tilers, carpenters, plumbers, electricians, and other specialists - are expected to enter the local job market, helping fill the shortage of trade professionals.

"The school will welcome students from all over Karabakh as well as Armenia, being equipped with dormitory facilities and aimed at becoming the most advanced school of this kind in the region", points out the chairman of the Hayastan Fund French affiliate Bedros Terzian.

"Today Artsakh is in dire need of highly skilled professionals in the construction sector," said Kajik Khachatryan, head of the Shushi District Administration. "The Yeznik Mozian School will mean a wonderful opportunity for young people who wish to specialize in a particular trade and become accomplished specialists."

"The establishment of the Yeznik Mozian School is an unprecedented initiative in the history of our organization," said Ara Vardanyan, executive director of the Hayastan All-Armenian Fund. "We are confident that, thanks to the contribution of our French-Armenian benefactor, the socio-economic development of Shushi will be further boosted by an educational institution poised to produce generations of highly qualified professionals."

The Yeznik Mozian School is being constructed in Shushi's eastern neighborhood, which continues to be developed as the city's educational quarter. It is already home to several music and liberal-arts schools as well as the Agriculture Department of Artsakh State University.

## Turkish Presidential Report

**Continued from page 1**

handled had undermined public confidence in the judicial system.

"On the one hand, a result to a case that does not satisfy the public conscience has emerged and, on the other hand, the credibility of all the public institutions has been brought into question," the DDK said in the report.

In 2010, the European Court of Human Rights ordered Turkish authorities to pay 100,000 euros ($132,600) to Dink's family in compensation, saying authorities had failed to protect Dink even though they knew ultra-nationalists were plotting to kill him.

Seven security officials have already been convicted for failing to relay information on the plot that could have prevented the murder.

In a statement ahead of last month's verdict, Amnesty International said authorities had still not investigated the full circumstances behind Dink's murder.

**massisweekly.com**
**massispost.com**

## AGBU Hye Geen March 2012 Conference: "Symbolism in Art, Architecture and Design"




GLENDALE, CA -- The AGBU Hye Geen has selected its speakers for their upcoming conference entitled "Symbolism in Art, Architecture and Design." This year's conference continues to focus on the status of the Armenian Diaspora living in the U.S., with a particular focus on symbolism as a means of expression.

The topic for the 7th annual conference explores the meaning of the many images incorporated into our lives, from the images woven into rugs, to the details incorporated in the structures that surround us, to the items we use every day.

The goal of the conference is to educate the broader community, both students and non-students alike, on design as a concept and the use of symbols to convey thoughts and ideas.

This year's four speakers have decades of experience between them. They bring their knowledge and expertise to translate and explain the meanings of the images and details that may have lost their significance to our present day society. They will examine the symbols and themes that have emerged and have been expressed in the designs produced by Armenians throughout history to the present.

Opening remarks will be done by Narineh Mirzaeian, a Los Angeles based designer and an associate at Gehry Partners, LLC, an architectural firm with a global reach. She will discuss the elements of design and its various permutations in the objects we see and use on a daily basis, from utensils to textiles.

Aram Alajajian is an award winning architect and principal of Alajajian-Marcoosi Architects, Inc.. His topic, Symbolism in Armenian Architecture: Past and Present, will present the symbols used in architecture throughout history from historical churches and public buildings to present structures.

Peter Frank is an associate editor at Fabrik magazine, an art critic for the Huffington Post, curator at the Riverside Museum. The subject, Caucasian Standard Time: Armenian-Americans and California Art in the Postwar Era, will look at the work of the artists and their importance.

Hratch Kozibeyokian is a master weaver, carpet designer and a textile restorer and conservator with many years of experience. A long standing tradition throughout the world, he will present Iconography in Armenian Woven Art and explore their use and meaning.

The conference will take place on Saturday morning, March 10, 2012, at Woodbury University, Burbank, California in the Ahmanson Main Space. The AGBU Hye Geen emphasizes that the conference is open to both men and women since these topics are of interest to everyone in the community as a whole.

Continuing in its conviction of collaborating with other groups for the overall good of the community, the Young Circle is partnering with the Woodbury Armenian Student Association (ASA) for the production of the conference.

The 7th annual conference will be held, for the first time, at Woodbury University in Burbank, California. Woodbury University is a leading institution specializing in the field of architecture. As such, Armenian students at the campus will be presenting their architectural designs for a prize sponsored by the Woodbury Armenian Student Association.

AGBU Hye Geen is an organization that focuses on empowering Armenian women today as agents for change while preserving and honoring their achievements. The AGBU Hye Geen Young Circle helps the organization stay relevant by exploring different issues facing the current generation of Armenians now living in the United States. The AGBU Hye Geen organizes an annual conference to explore the potential of the Diasporan community in the various aspects of its development. Most recent topics have included "Music as a Mirror" and "The Power of Broadcast Media on Ethnic Communities."

Registration is at 10am. Conference is from 10:30 am to 2pm. Lunch will be provided during a 30 minute break.

For additional information please contact agbuhyegeen.youngcircle@gmail.com or visit www.facebook.com/AGBU.HyeGeen.YoungCircle

Tamar Kevonian 818-425-1284 – Media Relations

**SEROP'S CAFE**
**GREEK & LEBANESE FOOD**
**SERVING BATON ROUGE SINCE 1979**

# ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ ՎԱՏԻԿԱՆԻ Բ ԺՈՂՈՎ 1962
# ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏԵԱՆ

**Վաստակաւոր Վերատեսուչ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին (1946-1956)**

**Հեղինակ՝**

**«*Թուղթ Միութեան*» եւ «*Թուղթ Հերքման*»**

*ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՑ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ*

*ՀԵՂԻՆԱԿԸ*

Դերենիկ Եպս. Փոլատեան ծնած Քեսապ 1914-ին, եւ առաջին երկու շրջանաւարտերէն եղած Անթիլիասի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին իրեն օծակից ունենալով Տ.Տ. Զարեհ Ա Փայասլեան Կիլիկիոյ Կաթողիկոսը (1956-1963): Ձեռնադրուած 1935-ին վերատեսուչ Շահէ Արքեպս. Գասպարեանէ, Դերենիկ վարդապետ կանուխէն Ամերիկա մեկնած է բարձրագոյն ուսման համար եւ տիրացած աստուածաբանութեան Մագիստրոսի եւ Դոկտորայի աստիճաններուն: 1945-ին ընկերակցելով Կիլիկեան Աթոռի Ընտրեալ Հայրապետ Տ.Տ. Գարեգին Ա Յովսէփեանց Կաթողիկոսին, վերադարձած է Անթիլիաս: 1947-ին հինգ ընտրեալներով եպիսկոպոս ձեռնադրուած են Գարեգին Ա Հայրապետի ձեռամբ, եւ 1946-1956 տասնամեակին վարած է Դպրեվանքի վերատեսչութիւնը: Դերենիկ Սրբազան 1963-ի Նոյեմբերին Պէյրութի մէջ անարգ ոճիրի մը զոհ գնաց հազիւ 50 տարեկանին: Իր վերջին պաշտօնն էր Եթովպիոյ Ուղղափառ Եկեղեցւոյ Դպրեվանքին տեսչութիւնը Ատտիս Ապապա ուր ես այնատեն կը վարէի համայնքին հովւութիւնը՝ Եգիպտահայ Թեմի Առաջնորդ Մամբրէ Արքեպս. Սիրունեանի հրաւէրով: Սրբազանը հրատարակած է շարք մը է ընտիր երկեր:

Դպրեվանքին բեղմնաւոր վերատեսչութիւնը վարելով Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեան ձեռնադրեց 12 միաբաններ որոնցմէ կրտսերագոյնը եղաւ տողերս գրողը: Իր յիշատակին մեր ընթերցողներուն կը ներկայացնեմ իր «Թուղթ Միութեան» եւ «Թուղթ Հերքման» պրակները, որոնք իրենց ժամանակին գրուած ջատագովականները եղան Հայ Եկեղեցւոյ պատմական հեղինակութիւնը ապացուցող: Որպէս ուսեալ եւ ջերմ պաշտպան Հայ Եկեղեցւոյ, Սրբազանը հերքած է անպէտ եւ անճիշդ բոլոր կանխակալ կարծիքներն ու հերիւրածոյ առաջադրութիւնները, ու փաստացի տուեալներով պահպանած է Հայ Եկեղեցւոյ դիմագիծը պայծառ եւ հիմքը՝ անխախտ:

*«ԹՈՒՂԹ ՄԻՈՒԹԵԱՆ»*
*1962 Թուի Վատիկանի*
*Բ Ժողովի Լոյսին Տակ*

90 էջնոց այս գիրքը Դերենիկ Սրբազան հրատարակեց Անթիլիասի Կաթողիկոսութեան տպարանէն 1960 թուին ու գայն ընծայեց «Յովհաննէս 23-րդ Պապի առաջադրած Տիեզերական Ժողովին» եւ եկեղեցիներու միութեան հարցին: Առաջադրուած ժողովը Վատիկանի Բ Ժողովն էր որուն բացումը Յովհաննէս 23-րդ Պապը կատարեց իր նախագահութեամբ 1962 Հոկտեմբեր 11-ին, որ ըստ Վատիկանի յայտարարութեան «իր անդամներու թիւովը ինչպէս նաեւ իր քննելիք հարցերուն այլազանութեամբը պիտի հանդիսանար եկեղեցւոյ գումարած ժողովներէն մեծագոյնը»:

Գրքին մէջ Սրբազանը լայն տեղ տուած է Ամստերտամի մէջ 1948-ին հիմնուած Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (ԵՀԽ) նպատակներուն եւ աշխատանքներուն: Սրբազանը խիկոյն ճշդած է թէ «Տիեզերական Ժողով» մը գումարելով Սրբազան Քահանայապետը «հրաւէր մը կ՛ուղղէր բաժանեալ համայնքները ի մի բերելու», կասկածի տակ առնելով հիմնական այն իրողութիւնը որ այդ ժողովը «տիեզերական» հանգամանք չէր կրնար ունենալ: Ցոյց տուած է Հռոմի եւ ԵՀԽ-ի միջեւ գոյացած հակադարձ շարժումը եւ Օրթոտոքս եկեղեցիներու մօտեցումը ԵՀԽ-ին եւ անոնց հեռացումը Հռոմէն:

Դերենիկ Եպիսկոպոս կ՛առարկէր թէ Պապը միայն մէ՛կ եկեղեցւոյ, այսինքն Լատին Եկեղեցւոյ ժողով մը կրնար գումարել, եւ թէ Հռոմ պիտի չհրաժարէր այն «պինդ կեցուածքէն ուր միութեան միակ ճամբան մոլորեալ ոչխարներուն Հռոմէական Եկեղեցւոյ փարախ վերադարձը պիտի ըլլար»: Սրբազան Քահանայապետը իր Ad Petri Cathedram (յԱթոռոյ Պետրոսի) կոնդակով կը ճշդէր թէ «Ժողովին գլխաւոր նպատակը պիտի կայանար իրագործելու Կաթոլիկ Եկեղեցւոյ տարածումը, հաւատացեալներուն քրիստոնէական կեանքի վերականգնումը, եւ եկեղեցական կար-

Շար.ը էջ 18



Նստած՝ կեդրոն՝ Դերենիկ Եպս. Փոլատեան (վխճ.), աջին՝ Գէորգ Աբեղայ Կարպիսեան (վխճ.), ձախին՝ Ներսեհ Աբեղայ Բապուճեան Ոտքի՝ ձախէն Գրիգոր Ա. Քհնյ. Հայրապետեան (վխճ.), Զաւէն Աբեղայ Արզումանեան, Մամբրէ Ա. Քհնյ. Գուզուեան, Վահրիճ Ա. Քհնյ. Տիրինեան (վխճ.)



# 2011-ԵՐԵՒԱՆԵԱՆ ՕՐԵՐ

*ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ*


Ձախէն աջ՝ Արփինէ Ասլանեան, Վահան Բախարեան, Շողեր Ասմարեան եւ Ղարիբ Եղիազարեան

## 4. ԲՈՒՀԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների՝ բուհերի հարցերը յաճախ են դառնում լրատուամիջոցների թիրախը անորակ շրջանաւարտներ պատրաստելու պատճառով՝ յիշելով խորհրդային շրջանի ուսման որակն ու կարգ ու կանոնը բուհերում: Այն ժամանակ անորակ շրջանաւարտների թիւը համեմատաբար քիչ էր, դրա համար էլ գիտութիւնն ու արդիւնաբերութիւնը արագ էին զարգանում Հայաստանում:

Լոս Անճելոսում ընկերներիցս մէկը մի ծրար բերեց ինձ Երեւանում յանձնելու ընկերոջը: Երբ վերջինս այցելեց ինձ ծրարը վերցնելու, պարզուեց, որ նա 30 տարի է որպէս դասախօս է աշխատում Երեւանի իմ աւարտած բուհում: Հետաքրքրուեցի համալսարանների ընդհանուր վիճակով: Ըստ նրա դրութիւնը բոլոր բուհերի համար համանման է: Ահա նրա պատմածը.

-Իմ աշխատած համալսարանում ուսման որակը չի գտնւում խորհրդային շրջանի մակարդակին: Պատճառը դասաւանդող որակաւոր դասախօսները չեն, այլ մի խումբ չփացած, երես առած ու լկտիացած ուսանողներ, որոնք հիմնականում օլիգարխների երեխաներն են ու բոլորովին չեն յարգում դասախօսներին, լսարանը դարձրել են հաճոյքի սենեակ, երբ ուզում են դուրս ու ներս են անում, իհարկէ «խնդրելով» տուեալ դասի դասախօսին: Երբեմն ներս մտնելուց մի քանի րոպէ անց «խնդրում են» դուրս գալ: Յաճախ նրանք չեն ենթարկւում դասախօսներին եւ չեն սովորում, բայց պահանջում են նշանակել դրական գնահատական: Երբ դասախօսը չի ուզում նշանակել դրական գնահատական «տտաբոբիկ» ուսանողին՝ նշելով, որ եթէ չսովորի դուրս կմնա համալսարանից, վերջինս պատասխանում է, որ յաջորդ տարին նորից կ՚ընդունուի ու կը շարունակի սովորել: Բայց շատ դէպքերում վերեւից ճնշումների միջոցով դասախօսը ստիպուած է լինում նշանակել, որպէսզի իր մի կտոր հացից չզրկուի: Ուսանողների թիւն էլ է քիչ, որից կախուած է դասախօսի աշխատավարձը: Պետութիւնը դասախօսին ամսական վճարում է 30 հազար դրամ աշխատավարձ (մօտ 84 տոլար), իսկ նրա աշխատավարձի լրացումը կատարւում է ուսանողների ուսման վարձից: Հետեւաբար ուսանողները թիւը դասախօսի աշխատավարձի որոշիչն է: Իսկ դպրոցների դասարանների թիւը 10-ից դարձնելով 12, բուհերը երկու տարի նոր ուսանողներ չեն ունենալու, որի պատճառով աւելի է վատթարանալու դասախօսների վիճակը:

Նշեմ, որ մեր սովորած ժամանակ մեծ յարգանք ու պատիւ կար դասախօսների նկատմամբ, որը փոխադարձ էր, դասախօսները սիրելով ուսանողներին, ամէն ինչ անում էին նրանց գիտելիքներով զինելու համար:

Հարց տանք Հայաստանի Նախագահին եւ գիտութեան ու կրթութեան Նախարարին. այս ձեւով շարունակելով արդեօ՞ք Հայաստանը կարող է պահել իր դասախօսներին եւ որակով շրջանաւարտներ ունենալ ժողովրդական տնտեսութիւնը զարգացնելու ու ժողովրդի տնտեսական վիճակը բարելաւելու համար: Մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի Հայաստանի գիտական ուժը անուշադրութեան մատնելը, որի հետեւանքով հայրենիքը արդէն կորցրել է շատ գիտաշխատողների ու շարունակւում է նրանց կորուստը:


Անդրանիկ Զօրավարին նուիրուածյուշարձանը

## 5. ՏԻԵԶԵՐՔԻ ԿԱՊԱՒՈՐԸ

Արփինէ Ասլանեանը Երեւանի Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի աւագ գիտաշխատող է, ազատ լրագրող եւ Հայաստանի ժուռնալիստների միութեան անդամ:

2002 Թ. Երեւանում գրքերիս շնորհահանդէսին ծանօթացանք, երբ նա ինձ հրաւիրեց ուղիղ եթերով հարցազրոյցի «Արձագանք» ռատիոկայանով, որից յետոյ մեր յարաբերութիւնները սերտացան: 2011-ին եւս հարցազրոյց ունեցանք նրա հետ նոյն ռատիոկայանով: Նա ինձ հրաւիրեց հարցազրոյցի նաեւ հեռուստատեսութեամբ, բայց ժամանակի սղութեան պատճառով այն չկայացաւ:

2011 Թ. Հոկտեմբերի 30-ին, կիրակի օրը Արփինէն ինձ հրաւիրեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ հոգեւոր մշակութային վերնատանը կայանալիք միջոցառմանը՝ հանդիպում Տիեզերքի հետ կապաւոր Շողեր Ասմարեանի հետ:

Միջոցառմանը մասնակցեցի քրոջս հարեւանի՝ Լիովա Ներսէսյանի հետ, որը ինժեներ է եւ զարգացած անձնաւորութիւն:

Տիեզերքի կապաւորին՝ Շողերին ներկայացրեց Արփինէն: Նա նշեց, որ Շողերը բարձրագոյն բանականութեան թելադրանքով գրել է 10 գիրք, շարունակում է գրել ու նկարել, ունի 150-ից աւելի գրաֆիկական գործեր, որոնք Տիեզերքի քարտէզագրումներն են ու շարժել են շատերի հետաքրքրութիւնը:

Տիեզերքից թելադրանքների ձեւով նա ստանում է տեղեկութիւնների հեղեղ, որոնք վերաբերում են գալակտիկաներում եւ այլ մոլորակներում ընթացող մինչեւ հիմա մարդկութեանն անյայտ երեւոյթներին:

Թելադրանքներն իրենց մէջ պարունակում են ֆիզիկա, քիմիա, աստղաֆիզիկա, հին՝ մարած լեզուներով ինֆորմացիաներ, անցեալի հին քաղաքակրթութիւններին, ինչպէս նաեւ մեր գալակտիկայի եւ նրանից դուրս գտնուող մոլորակների ու այն բանական էակներին վերաբերող տուեալներ, որոնց մասին շատերը չգիտեն կամ աղօտ պատկերացում ունեն:

Միջոցառումն աւարտուեց ճոխ գեղարուեստական յայտագրով՝ ՀՀ ժողովրդական արտիստ, վիրտուոզ քանոնահարուհի Անժելա Աթաբեգեանի եւ իր սաների կատարումներով, որոնցից շատերն արդէն պրոֆեսիոնալ արուեստագէտներ են: Ներկաները բուռն ծափահարութիւններով ընդունեցին նրանց եւ մեծ բաւականութիւն ստացան ելոյթներից:

Միջոցառման աւարտին Արփինէն մեզ ծանօթացրեց քեռու՝ ՀՀ մշակոյթի վաստակաւոր գործիչ, նկարիչ Ղարիբ Եղիազարյանի եւ քեռակնոջ՝ Շողեր Ասմարյանի հետ, որի գրաֆիկական գործերը շարուած էին սրահում: Լիովայի հետ մօտեցանք դրանց, որոնք տարբեր գոյներ ու բովանդակութիւն ունեն, որոնցից, անկեղծ ասած, բան չէինք հասկանում: Մեր ուշադրութիւնը գրաւեցին նաեւ տարբեր ձեւի փոքրիկ էլեմենտներ՝ թուային կոդեր՝ 3, 7, 9, հիերոգլիֆներ եւ այլն, որոնք նոյն գրաֆիկայում կրկնւում են եթէ ոչ հազարաւոր, գոնէ հարիւրաւոր անգամներ եւ իրարից չեն տարբերւում նոյնիսկ աննշան կէտով: Լիովայի մօտ եղած խոշորացոյցով ստուգեցինք գրաֆիկաներից մէկում կրկնուող այդ էլեմենտներից 3 եւ 7 թուերը, որոնք մրջիւնների նման «բանակ» էին կազմում ու ոչ մի տարբերութիւն չգտանք գրուած թուերի միջեւ: Եթէ ցանկացած մարդ փորձի նոյն թիւը գրել երկու անգամ, դրանք երբէք իրար նման չեն լինի: Մենք առաջին անգամ էինք տեսնում այդ հետաքրքիր եւ խորհրդաւոր գրաֆիկաները, որոնք մեծ տպաւորութիւն թողեցին մեր վրայ: Ես հաւատացի, որ դրանք ստեղծելիս Տիեզերքի հզօր ուժն է ղեկավարում Շողերին:

Միջոցառումը շէնքի երկրորդ յարկում էր, իսկ առաջին յարկը Շողերենց բնակարանն էր: Տանտէրերը ներկաներին հրաւիրեցին նախօրօք պատրաստուած ճոխ սեղանի շուրջը, որտեղ հաճելի մթնոլորտում ծանօթացայ նաեւ Անժելա Աթաբեգեանի, երգիծաբան Հորիզոնի եւ այլ շատ հաճելի ու հայրենասէր անձնաւորութիւնների հետ:

Ղարիպ Եղիազարեանի կենսագրութիւնից հասկացայ, որ նա հիմնել ու ղեկավարել է Երեւանի Նաղաշ Յովնաթանի անուան արուեստի համալսարանը, որի աշխատակազմի հետ բարգաւաճ տարիների ընթացքում պատրաստել է բարձրորակ արուեստագէտներ, իսկ անկախութիւնից յետոյ իրենց միջոցներով երկար չեն կարողացել պահել համալսարանը, ստիպուած փակել են: Աշխատակազմի մեծ մասը ներկայ էր սեղանի շուրջը:

Պայմանաւորուեցինք եւ յաջորդ օրը Արփինէի հետ նորից այցելեցինք Շողերի ընտանիքին: Ծանօթացայ ընտանիքի անդամների հետ: Արուեստագէտների ընտանիք է: Հիւրասիրութիւնից յետոյ Շողերը, Արփինէն եւ ես առանձնացանք ու մեր զրոյցի ընթացքում ես ստացայ ինձ հետաքրքրող որոշ հարցերի պատասխանները, որոնց մի մասն ամփոփ կերպով ներկայացնում եմ ընթերցողին:

Շողեր Ասմարեանը ծնուել է 1959 Թ. Ապրիլի 16-ին 36 տարեկան մօրից եւ իր կեանքի շրջադարձն էլ սկսել է 36 տարեկանին, երբ ծանր հիւանդացել ու տեղափոխուել է հիւանդանոց, որտեղ նրան զննող բժիշկը յայտնել է նրա անյոյս վիճակի մասին: Սակայն յաջորդ առաւօտեան Շողերն արթնացել է շատ առողջ՝ զարմացնելով բժիշկին ու ներկաներին: Այնուհետեւ սկսել է իր կապը Տիեզերքի հետ: Ըստ Շողերի «Մտքի էներգիան ամենահզօրն է Տիեզերքում: Նա մեր ապրելու եւ հոգու անմահութեան ամենամեծ գրաւականն է»:

Շողերն ինձ ցոյց տուեց առաջին տետրակը, որը գրել էր Տիեզերքի թելադրանքով, որտեղ ոչ մի կետադրական նշան չկայ: Նա բացատրեց, որ գրելու կամ գրաֆիկաները ստեղծելու ժամանակ, կարեւոր չէ լոյս թէ մութ տեղում, ինքը ոչինչ չի զգում, ձեռքը չափազանց արագ շարժւում եւ սղագրում է կամ գծում ու նկարում լոյսի

Շար.ը էջ 17

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ԱՆԱՂԱՐՏ ՊԱՀԵԼՈՒ ԵՒ ՄՇՏԱՊԷՍ ՀԱՐՍՏԱՑՆԵԼՈՒ ՄՏԱՀՈԳՈՒԹԵԱՄԲ

*ՌՈՄԱ ԴԱԼԼԱՔԵԱՆ*

Վերջին տարիներին հայոց լեզուի աղաւաղումներին, նրա տարաբնոյթ խեղաթիւրումներին անդրադարձել են ոչ փոքրաթիւ մարդիկ: Գրուել են ինքնատիպ աշխատութիւններ: «Ազգ», «Գրական թերթ» եւ այլ պարբերականներում հրապարակուել են ուշագրաւ յօդուածներ, առանձին գրախօսութիւններում մատնանշուել են գրախօսուող գրքերում նկատուած լեզուական մեղանչումները: Բայց իրողութիւնն այն է, որ հայոց լեզուի անաղարտութեան, նրա լեզուական օրինաչափութիւնների անխաթար պահպանման համար պայքարը հիմնականում կրել ու կրում է թոյլ, տարերային բնոյթ: Ի վերուստ չկան պետական մտահոգութիւններ, պահանջկոտութիւն ու վերահսկողութիւն: Հայերէնի անաղարտութեան ու մաքրութեան պահպանումը, նրա բառուբանի անընդմէջ հարստացումը մշտապէս պէտք է լինեն պետութեան, նրա համապատասխան բարձրագոյն մարմինների, գիտակրթական համակարգի բոլոր բաղադրիչների, մամուլի, ռադիոհեռուստատեսութեան ղեկավար օղակների ուշադրութեան կենտրոնում: Եւ պետական լիարժէք հսկողութեան բացակայութեան, ամենաթողութեան, նաեւ այլ պատճառներով այժմ ամենուրէք վայրէջք է ապրում հայոց լեզուն:

Շարունակ տեսնելով ու լսելով հայերէնի աղաւաղումները ես ակամայ յիշեցի հայերէնապաշտ Պարոյր Սեւակին, որ, աւա՜ղ, դէպքերի դժբախտ բերումով կարճ ապրեց, բայց սերունդներին թողեց ոչ միայն բանաստեղծական մի ինքնատիպ ու հայեցի աշխարհ, այլեւ գրականագիտական, քննադատական, հրապարակագրային աշխատութիւնների մի բացառիկ ընտրանի՝ ազգօգուտ, բազմաբնոյթ հարցերի խորագննին արծարծումներով ու քննարկումներով, իմաստալից խտացումներով ու գիտական ծանրակշիռ ընդհանրացումներով: Այդ ընտրանիի սրբազան մասունքներից մէկը, «Պահպանենք եւ հարստացնենք մեր մայրենին» վերտառութեամբ, հրապարակագրային խորիմաստ յօդուածն է, որ առաջին անգամ տպագրուեց «Գրական թերթի» 1962 թ. Մարտի 25-ի համարում եւ լայն արձագանք ստացաւ ինչպէս մայր հայրենիքում, այնպէս էլ տարասփիւռ հայութեան բազմազան շրջանակներում՝ առաջ բերելով խանդավառութիւն եւ ազգային հպարտութեան ու արժանապատուութեան խոր զգացումներ: Անցել է գրեթէ հինգ տասնամեակ, եւ այդ յօդուածը բնաւ չի կորցրել իր հնչեղութիւնն ու այժմէականութիւնը, քանզի հայոց լեզուի անաղարտ պահպանումն ու հարստացումը շարունակական եւ մշտական բնոյթ պիտի կրեն: Եւ ահա՛ թէ ինչու: Հայի համար հայոց լեզուն է այն տիեզերական զօրեղութիւնը, առարկայացուած ոգին, հոգեմտաւոր զէնքը, որոնց միջոցով հայ էթնիկական ցեղը կարողացել է գոյատեւել պատմութեան հողմագալարներում՝ վաղնջական դարերից հասնելով մինչեւ մեր օրերը եւ շարունակելով իր երթը դէպի յաւերժութիւն: Հայոց լեզուն ամէն մի սթափ ու գիտակից հայի հեռահար լոյսն ու զէնքն է, ազգի ինքնութեան ու ինքնագիտակցութեան, ազգային մտածողութեան, կենսունակութեան, միաբանութեան եւ միասնութեան, զարգացման ու հարստացման ամենայորդաբուխ, ամենավճիտ աղբիւրը: Նա համայն հայութեան նախապատմական ժամանակների, ներկայ ու գալիք դարերի անտրոհելի կապն ու կամուրջն է, նրա պատմութեան ու յարատեւման ամրակուռ զէնքն ու զրահը, ազգային ինքնատիպ մտածողութեան ակունքը, ազգային լինելիութեան, հպարտութեան ու արժանապատուութեան (ոչ սնապարծութեան) մեսրոպակերտ ու վարդանաձոյլ թագը՝ մեր պատուի ու ինքնասիրութեան առհաւատչեան:

Ահա թէ ինչու Պարոյրի յօդուածում մտահոգութիւն են յարուցել մեր լեզուին առնչուող մի քանի սկզբունքային հարցեր.

ա) «Արհեստականօրէն մեր շուրթերին սոսնձուած» (Պարոյրի արտայայտութիւնն է. Ռ. Դ.) բառերի մի խմբի մասին (ռեւոլուցիա, դեպուտատ, կոնստիտուցիա, պարտիա, սովետ, դելեգատ, ռեսպուբլիկա),

բ) Օտար բառերի եւ օտարաբանութիւնների կիրառումը հայերէնում,

գ) Մեր լեզուի շարահիւսական եւ այլ կարգի աղաւաղումները,

դ) Մարդկանց գործածական լեզուի բառապաշարի աղքատութիւնը եւ այլն:

Նշուած եւ այլ հարցերի մասին խօսելուց առաջ Պարոյր Սեւակը շեշտել է, որ՝ «Սակաւ սրբութիւններ չունի մարդ արարածը, բայց, անկասկած, նրա սրբութիւն սրբոցը մայրն է, այս պատճառով էլ ամենանուիրական բաները առնչւում են մօրը՝ հայրենիքը կոչելով՝ «մայր», լեզուն՝ «մայրենի»: Եւ ապա՝ «Իբրեւ մօր նայել ու իբրեւ մօր են պահել իրենց մայրենի լեզուն հայ ժողովրդի մայրասէր ու մայրախնամ զաւակները՝ սկսած Մաշտոցից ու մեր առաջին թարգմանիչներից մինչեւ Նարեկացի ու Շնորհալի, Դուրեան ու Րաֆֆի, Վարուժան ու Չարենց» (ընդգծումը իմն է. Ռ. Դ.):

Պարոյրը որդիաբար հպարտանում է հայոց լեզուի վերելքով (այո՛, այդ տարիներին ամենուրէք վերելք էր ապրում հայոց լեզուն. Ռ. Դ.), միաժամանակ ընդգծում, որ «անցած քառասուն տարում (1920-1962 թթ. Ռ. Դ.) հայրենիք վերադարձաւ, վերջապէ՛ս, եւ հայրենի կտուրի տակ բնակուելով բարգաւաճեց հայագիտութիւնը, որ տարափոխիկ թռչունի պէս ապաստանել էր օտար բներում՝ Վենետիկում եւ Մոսկուայում, Վիեննայում ու Թիֆլիսում, Պոլսում ու Պաքւում»: Սեւակն, այնուհետեւ, լեզուաբանի հմտութեամբ քննաբանում է վերը նշուած հարցերը, բերում բնորոշ փաստեր, օրինակներ, ցուցանում գրաւոր ու բանաւոր խօսքի ծուռն ու թերին եւ կատարում լեզուաբանական խորիմաստ ընդհանրացումներ՝ հայոց լեզուի օրինաչափութիւնների կիրառութիւնները կատարեալ տեսնելու մտահոգութեամբ:

Միանգամայն միտումնաւոր անդրադարձայ (իհարկէ, շատ թռուցիկ) Պարոյր Սեւակի արժէքաւոր յօդուածին, որի գերագոյն նպատակն էր եւ է՛ մաքուր ու անաղարտ պահպանել եւ հարստացնել մայրենին:

Վերը նշեցի, որ Պարոյրի յօդուածի տպագրութիւնից անցել է 50 տարի: Եթէ մի հրաշքով վերակենդանանար Պարոյրը եւ լսեր շատ ռատիօհեռուստահաղորդումներ, Ազգային ժողովի պատգամաւորների ելոյթներ, պետական մակարդակի նիստերի, խորհրդակցութիւնների առանձին զեկուցումներ ու ճառեր, կարդար բազմաթիւ թերթեր, ամսագրեր ու նոր տպագրուած գրքեր, շատ ատենախօսութիւնների սեղմագրեր (էլ չեմ ասում ամբողջական ատենախօսութիւններ), լիներ դպրոցներում, բուհերում եւ կարդար (ընտրովի) աշակերտների, ուսանողների գրաւոր աշխատանքներ, լսեր բանաւոր պատասխաններ, շրջեր եւ տեսնէր մայրաքաղաքում (եւ ո՛չ միայն մայրաքաղաքում) օրէցօր բազմացող օտարագիր ցուցանակներ, ազդագրեր, զանազան կարգի մեծադիր գովազդներ, նիւթն ու շահը թմբկահարող վահանակներ, միանգամից կաթուածահար կը լինէր...

Մինչդեռ հայոց լեզուի գրաւոր ու բանաւոր արտայայտման մակարդակները յատկապէս վերջին երկու տասնամեակում աննախընթաց զարգացում պիտի ապրէին, օրինաչափ զարգացում, որ յատուկ է պետական կարգավիճակ ունեցող շատ լեզուներին. օրինակ՝ ռուսերէնին, ֆրանսերէնին, անգլերէնին, իտալերէնին, պարսկերէնին եւ այլն: Սակայն իրողութիւնն այն է, որ հայոց լեզուն ամէնուրէք վայրէջք է ապրում: Իսկ այդ երեւոյթն ազգի, մանաւանդ փոխյաջորդող սերունդների համար ամէնից վտանգաւորն ու կործանարարն է:

Երեւանում, օրինակ, օտարագիր եւ օտարահունչ ցուցանակները, գովազդները, ազդագրերը գերազանցում են հայերէնով գրուածներին, եւ քաղաքը կորցնում է իր ազգային ինքնատիպութիւնը: Տարիներ առաջ լինելով Հռոմում՝ ես գրեթէ օտարագիր ցուցանակ չտեսայ. ամէն ինչ իտալերէն էր: Նոյնիսկ խորհրդային կաղապարուած գաղափարախօսութեան պայմաններում Էսթոնիայում, Արեւմտյան Ուքրաինայի քաղաքներում, ուր գործուղումների առիթներով եղել եմ 1960-80-ական թուականներին, ի զարմանս ինձ, չտեսայ ռուսերէնով գրուած ցուցանակներ: Մինչդեռ ռուսերէնով գրելը ազգային լեզուների կողքին պարտադիր էր: Աբովեան եւ Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում գտնուող «Անի» հիւրանոցը, օրինակ, չունի հայերէնով արտայայտուած ցուցանակ. մուտքի ճակատին խոշոր գրերով (անգլերէն) դրոշմուած է. «Ani plaza Hotel»: Այդ նոյնը հայերէն փոքր գրերով, առանց թարգմանութեան, տեղադրուած է անգլերէնից յետոյ: Մինչդեռ հայատառ եւ հայերէնով արտայայտուած ցուցանակները պիտի լինեն առաջին պլանում, իսկ օտարագիրները՝ 2-րդ տեղում, դրանք էլ՝ ոչ բոլոր շինութիւններում, ասենք՝ օդանաւակայաններում, բանկերի, հիւրանոցների եւ նմանատիպ շէնքերի մուտքերում: Փորձենք քայլել Երեւանի յատկապէս կենտրոնական փողոցների մայթերով եւ աջ ու ձախ դիտարկել մանաւանդ առեւտրական հիմնարկների ցուցանակները, վահանակները, ազդագրերն ու գովազդները. դրանք հիմնականում օտարագիր են ու օտարահունչ եւ աղարտում են մայրաքաղաքի հայեցի պատկերը: Դրանց տեղադրման համար պէտք է գործեն միասնական չափանիշներ, ինչպէս ընդունուած է աշխարհի առաջաւոր քաղաքներում:

Մասնագիտական հիմնաւորումներով ապացուցուած է, որ դաժանութիւնները, անբարոյ երեւոյթները ենթակայ են կրկնօրինակման: Մեր հեռուստահաղորդումների գրեթէ բոլոր ալիքներով տարբեր ժամերի ցուցադրւում են սերիալներ, որոնք ներկայացնում են դաժանութիւններ, ծեծկռտուքներ, սպանութիւններ, անմարդկային տեսարաններ: Դրանցում՝ գեղագիտական արուեստի, բարձր ու վսեմ գաղափարների մասին խօսք չի կարող լինել: Դրանք միաժամանակ մատուցւում են ժարգոնով, գողական լեզուով: Դրանք կարո՞ղ են դրականօրէն ազդել յատկապէս դեռահասներին, հասունացող սերնդին: Երբե՛ք: Դրանք միայն աղարտում են մարդկանց սրտերն ու հոգիները եւ շատերին տանում յանցագործ ճանապարհներով: Եւ այս մասին շատ է գրուել (տե՛ս, օրինակ, «Ազգ» թերթի 2011 թ. Նոյեմբերի 24-ի համարում տպագրուած «Մրցավազք՝ ո՞վ աւելի դաժան տեսարան կը մատուցի» վերտառութեամբ խորիմաստ յօդուածը, որի հեղինակը շնորհալի լրագրող Մարիետա Խաչատրեանն է):

Եւ զարմանալի է, որ իշխանութիւնները, համապատասխան կառոյցները փականք չեն դնում հեռուստաէկրաններով մատուցուող աղբի, հոգեսպան, ագրեսիւ վարք ձեւաւորող սերիալների եւ այլ բնոյթի հաղորդումների առջեւ: Որոշ լրատուամիջոցներ նոյնպէս մրցավազքի մէջ են, թէ ով աւելի դաժան ու սահմռկեցուցիչ տեսարան կարող է մատուցել:

Փոխուել են ժամանակները, բացասական իմաստով փոխուել է սերունդը. գուցէ մեղաւոր է Արեւմուտքը, որ երազանք չունի, միակ երազանքը շահն է, նիւթը, յանուն որոնց սրբի կերպարանքով շրջում է ամբողջ աշխարհում, նաեւ՝ մեր լեռնաստանում՝ համաշխարհայնացման (գլոբալիզացիա), կեղծ բարեբարութեան, կեղծ ժողովրդավա-

*Շար.ը էջ 19*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ
(626) 797-7680

# ԱՆԱՀԻՏ ԱՍՏՈՒԱԾՈՒՀԻԻ ԱՐՁԱՆԻ ՄԱՍԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏՈՐԱԳՐԱՀԱՒԱՔ



*Հայաստանի երիտասարդական հիմնադրամը հանդէս կու գայ Անահիտ աստուածուհիի արձանին մասերը Բրիտանական Թանգարանէն Հայաստան վերադարձնելու նախաձեռնութեամբ: Այդ առիթով Հայաստանի երիտասարդական հիմնադրամը կը սկսի ստորագրահաւաք: Այս մասին կ՛ըսուի հիմնադրամի տարածած հաղորդագրութեան մէջ:*

*Ըստ հաղորդագրութեան՝ ՀՀ-ի մէջ Մեծ Բրիտանիոյ եւ Հիւսիսային Իռլանտայի Միացեալ Թագաւորութեան դեսպաններ Տիկին Քեթրին Ճէյն Լիչի եւ պարոն Ճոնաթան Ճէյմս Էյվսին հասցէագրուած ուղերձի մէջ մասնաւորապէս ըսուած է.*

*«Մենք՝ ներքոստորագրեալներս, հանդէս կու գանք հայկական մշակութային եւ պատմական արժէքները հայրենիք վերադարձնելու նախաձեռնութեամբ:*

*Աշխարհի թանգարաններու մէջ այսօր կը պահպանուին եւ կը ցուցադրուին բազմաթիւ ստեղծագործութիւններ, որոնք հայկական մշակոյթի նմուշներ են: Մշակութային այդ արժէքներու շարքին են Բրիտանական թանգարանին մէջ պահպանուող Անահիտ աստուածուհիի պրոնզաձոյլ գլուխը եւ ձեռքերը: Մենք կոչ կ՛ընենք մշակութային այդ մասունքները Հայաստանին վերադարձնելու, քանի որ արուեստի եւ պատմական արժէքները պէտք է պահպանուին ու ցուցադրուին այն երկրի մէջ, ուր ստեղծուած են եւ որուն պատմութեան կրողներն ենե:*

*Դեսպաններուն յղուած ուղերձին մէջ երախտիքի խօսք կ՛ըսուի Մեծ Բրիտանիոյ՝ հայկական մշակութային ժառանգութիւնը Թրքական վանտալիզմէն փրկելու եւ պահպանելու համար: ,Սակայն պատմական արդարութիւնը կը պահանջէ, որպէսզի Անահիտ աստուածուհիի արձանին մասերը հայրենադարձուին եւ հանգրուանեն ծագման երկրին մէջ: Համոզուած ենք՝ Մեծ Բրիտանիան կը յարգէ մեր նախաձեռնութիւնը եւ կը վերադարձնէ Անահիտ աստուածուհիի արձանի մասերըե,- ըսուած է ուղերձին մէջ:*

# ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ ՎԱՐԴԱՆԱՆՑԻ ՄԱՍԻՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*յօդուածը: Բայց եթէ մեր ընթերցողներուն կողմէ այլ հարցադրումներ կամ լուսաբանութեան կարօտ հարցեր ըլլան, մենք պատրաստ ենք պատասխանելու: Դարձեալ չեշտենք, որ մեր այս յօդուածի միտք բանին մեր պատմութեան քննական վերարժեւորման անհրաժեշտութիւնն է, ուր մեր ազգային շահը գերադասելի պէտք է ըլլայ ամէն տեսակի անձնական թէ հատուածական, կուսակցական թէ եկեղեցական շահերէ: Մեր այս համոզումէն առաջնորդուելով է, որ «Մասիս»ի Փետրուար 22, 1997ի թիւին մէջ լոյս տեսած մեր «Պահել Հաւատքը, Խթանել Միտքը» յօդուածով եւ անկէ ետք մի քանի այլ յօդուածներով, բարձրաձայնած ենք Վարդանանցի վերարժեւորման հարցը:*

--------------------

*Յ.Գ. Որպէս յետ գրութիւն, պատշաճ կը տեսնենք համառօտակի պատասխանելու «Մասիս»ի նախանցեալ թիւով Ռուբինա Օհանեանի բարձրացուցած այն հարցին, թէ ինչո՞ւ Պատմահայր Խորենացին «ոչինչ չի ասում Վարդանանքի մասին», հակառակ ժամանակակից ըլլալուն: Պարզապէս որովհետեւ Խորենացին իր պատմութիւնը հասցուցած է մինչեւ Արշակունեաց Թագաւորութեան անկում՝ 428Թ. եւ փակած իր նշանաւոր «Ողբ»ով: Ճիշտ է, որ ան անդրադարձած է Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ կաթողիկոսի վախճանումներուն, որոնք 428էն ետք պատահեցան, բայց ատոնք երախտիքի խօսքեր են իր ուսուցիչներու մասին գրածը աւարտին հասցնելու:*

*Օհանեանի նշած այն մեկնաբանութիւնը թէ Խորենացին չէր համակրէր Մամիկոնեաններուն (զոր ինք ալ խոցելի կը գտնէ), չէր կրնար Վարդանանքը չնշելու պատճառ ըլլալ: Զմոռնանք, որ Խորենացին է աղբիւրը մեզի հասած այն տեղեկութեան, որ Վարդան Մամիկոնեան Մեսրոպ Մաշտոցի հետ Կոստանդնուպոլիս գնաց եւ կայսեր կողմէ ստացաւ սպարապետի (Ստրատելատ) պատուոյ կոչում: Կորիւն, որ Մաշտոցի աշակերտն ու կենսագիրն է, չի նշեր այդ տեղեկութիւնը: Ի դէպ, Կորիւն Վասակի մասին գովեստով կ՛արտայայտուի որպէս «քաջ Սիւնական Վասակը, խելացի ու հանճարեղ եւ կանխագէտ, աստուածային իմաստութեան շնորհքով օժտուած մի մարդ է»: Առարկողներ կան, որ Կորիւն Աւարայրէն առաջ գրած է իր պատմութիւնը եւ ատոր համար կը գովէ Վասակը: Բայց հոն նշուած «կանխագէտ» բառը մեզի ենթադրել կու տայ, որ արդեօ՞ք Աւարայրէն անմիջապէս ետք գրուած է, անուղակի հասկցնելով, որ Վասակ կանխատեսած էր Փայտակարանի համաձայնութիւնէն ետք ապստամբութիւնը շարունակելու ապարդիւնութիւնը:*

# ՎԱՐԴԱՆԱՆՔ

*Շարունակուած էջ 6-էն*

*է, թէ հայ ժողովուրդը կը մերժէ ընդունիլ Զրադաշտականութիւնը, կը մերժէ կրօնափոխ ըլլալ, եւ ատոր համար յանձնառու է մինչեւ ի մահ պաշտպանել իր Քրիստոնէական հաւատքը:*

*Հայ նախարարները անմիջապէս Տիզբոն կը կանչուին, այդ ժամանակուան Սասանեան աշխարհակալ Պարսկաստանի մայրաքաղաքը, Յազկերտ Բ.ին առջեւ՝ պատասխանատուութեան: Հասնելով Տիզբոն, հայ նախարարական տուներու իշխող ներկայացուցիչները, զանազան չարչարանքներու եւ մահուան սպառնալիքներու ներքոյ, ստիպուած կ՚ըլլան առերես ուրանալ Քրիստոնէութիւնը՝ փոխարէնը ընդունելով Զրադաշտը:*

*700 մոգերու եւ պարսկական հսկիչ զօրախումբերու ուղեկցութեամբ, Յազկերտ Բ., Տիզբոն ժամանած քաղաքական գործիչներէն եւ անոնց զաւակներէն ոմանց պատանդ վերցնելով, Հայաստան վերադառնալու համար ազատ կ՚արձակէ հայ նախարարները, անոնց հրամայելով տարուայ մը ընթացքին եկեղեցիները վերածելու ատրուշաններու՝ սատարելով զրադաշտական կրօնի տարածման:*

***ԱԶԳԱՅԻՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ***

*449 Թուականի Սեպտեմբերին, երբ Այրարատ նահանգի Ծաղկոտն գաւառի Անգղ աւանը ժամանած մոգերը կը փորձեն տեղւոյն եկեղեցիները վերածել ատրուշաններու, ըմբոստացած հայ գիւղացիներ, Ղեւոնդ Վանանդեցի երէցի գլխաւորութեամբ, կը կոտորեն մոգերն ու անոնց ուղեկցող հսկիչ զօրախումբերը, իսկ զրադաշտական կրօնի սրբութեան խորհրդանիշ «անշէջ կրակը» վերցնելով՝ կը նետեն ջուրը: Շուտով Անգղ աւանի օրինակին կը հետեւին նաեւ Զարեհաւանի բնակիչները եւ, այսպիսով, համազգային տարերային շարժումը կը ծաւալի ամբողջ Հայաստանի տարածքով:*

*Ազգային ապստամբութեան առաջնորդ կ՚ընտրուի Վարդան Մամիկոնեանը: Հակառակ Հայոց կողմէ ձեռնարկուած ամէն դիմումներուն, քրիստոնեայ Բիւզանդիոյ թէ՛ Մարկիանոս կայսրը եւ թէ Հայաստանի դրացի Վրացիները կը մերժեն ռազմական օգնութիւն տրամադրել Պարսիկներուն դէմ պատերազմի սեմին գտնուող հայերուն:*

*Հայ հոգեւորականութեան մեծ մասի, մասնաւորաբար Յովսէփ Ա. Հողոցմեցիի եւ Ղեւոնդ Երէցի քաջ դիրքորոշումին եւ շնորհիւ սպարապետ Վարդան Մամիկոնեանի դրսեւորած վճռակամութեան, Պարսից դէմ ապստամբութիւնը կը շարունակուի, հակառակ անոր որ հայկական կողմը քաջ գիտակից էր, թէ ուժերու համեմատութիւնը ամբողջապէս անհաւասար է, ուստի՝ Հայոց համար մեծ չէն յաղթանակի մը հաւանականութիւնները:*

*(Շարունակելի)*

# ՏԽՈՒՐ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 8-էն*

*եմ... Հեռուից մեր բարեկամներից մինը ձեռքով դէմս նշան է անում օդի մէջ ու ձայն է տալի.*

*Վերջացա՜ւ...*

*Վազում եմ... Մի երկու րոպէից աչքիս առջեւն էր նրա վիթխարի դիակը, իսկ ականջումս կանչում էր մեր բարեկամի գուժկան ձայնը.*

*Վերջացա՜ւ...*

*Այո՛, վերջացաւ: Յաւիտեան վերջացաւ: Եւ ինչքա՜ն բան վերջացաւ ինձ համար... որովհետեւ ինչքան էլ սիրելի լինէր նա որպէս գործիչ, հազար անգամ աւելի թանկ էր որպէս ընկեր, եւ ինչքան էլ շնորհալի լինէր որպէս ստեղծագործող, անհամեմատ աւելի բարձր էր որպէս ստեղծագործութիւն: Աստծոյ հազուադէպ յաջող ու պայծառ ստեղծագործութիւններից մինն էր նա:*

# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ճԱՆԱՉՈՒՄԻՑ

*Շարունակուած էջ 5-էն*

*տարիներ շարունակ ակտիւ լոբբինգ էր անում նախ՝ Ցեղասպանութեան ճանաչման, իսկ յետոյ էլ ժխտողականութիւնը քրէականացնող օրինագծի ընդունման օգտին եւ հասել էր մեծ արդիւնքների: Այնուամենայնիւ, որոշումների ընդունման գործընթացում կայ մի պահ, մի հատուած, երբ որոշման ընդունման համար ներքին լոբբինգն ու ներքաղաքական իրավիճակը բաւարար չեն, եւ կարեւոր գործօն կարող են հանդիսանալ արտաքին ազդակներն ու խթանները: Նախորդ տարուայ Հոկտեմբերին Ֆրանսայի նախագահի պետական այցը Հայաստան, որը իրաւամբ որակուեց որպէս պատմական, դարձաւ առանցքային եւ որոշիչ՝ գործընթացը վերսկսելու համար:*

*Նշեմ, որ նմանատիպ օրինագիծ վերջին տարիներին ընդունել են նաեւ Շվէյցարիան եւ Սլովակիան, ինչը ցոյց է տալիս, որ Սփիւռքի եւ Հայաստանի Հանրապետութեան համատեղ ջանքերի կոորդինացումը նոր մարտավարութեան ուղղութեամբ առաւել քան արդիւնաւէտ է: Աւելին, Հայաստանը, որպէս պետութիւն, ապացուցեց, որ շարունակում է մնալ հայ ժողովրդի պահանջատիրութեան առաջամարտիկ եւ վերջին տարիներին ամենեւին էլ չի թուլացրել ջանքերն այդ ուղղութեամբ: Կարծում եմ՝ յետագայում եւս պէտք է ուժերը կենտրոնացնել ոչ միայն ճանաչման եւ դատապարտման օրինագծերի ընդունման, այլեւ գլխաւորապէս Թուրքիայի անգուսպ մերժողականութիւնը սանձահարող նմանատիպ օրէնքներ անցկացնելու շուրջ:*

*Այս փայլուն յաղթանակը եւս մեկ անգամ ցոյց տուեց, որ Սփիւռք-Հայաստան կապը միակողմանի չէ, եւ Հայաստանի իշխանութիւնները վճռական են հայ ժողովրդի ոտնահարուած իրաւունքների պաշտպանութեան եւ պատմական արդարութեան վերականգնման համար գործուն դերակատարութիւն ունենալու հարցում:*

*«Առաւօտ» օրաթերթ*

massispost.com
daily news updates

www.massisweekly.com
updated every Friday

## 2011-ԵՐԵՒԱՆԵԱՆ ՕՐԵՐ

*Շարունակուածէջ6-էն*

*ուղեկցութեամբ: Որքան ժամանակ է տեւում այդ գործընթացը ինքը չի զգում, միայն այն աւարտուելուց յետոյ տեսնում է, թէ ինչ է արել: Կարծում եմ թելադրանքը նման է գրողի մուսային, ցանկացած պահին նա ստիպում է իրեն նստել սկսել սղագրել կամ գծելնկարել գրաֆիկան: Շողերի Տիեզերքի հետ կապի մէջ միգուցէ մեծ դեր ունի նաեւ հեռամտաընկալումը՝ թելեպատիան, որը հաղորդակից անօդների օրէնքով ունի իւրաքանչիւր էակ իրեն հասանելի չափով՝ կախուած նրա զարգացման աստիճանից: Զգացւում է, որ Շողերի մօտ այն շատ բարձր է:*

*Անկեղծ ասած, իմ աստուածային հաւատամքը Տիեզերքի այդ հզօր ուժն է, որին հաւատում ու ընդունում եմ որպէս Աստուած, որի հաստատումը գտա Շողերի կապով Տիեզերքի հետ:*

*Շողերը նոյնպէս ընդունում է այդ ուժը որպէս Աստուած, որին ապաւինում ու կատարում է թելադրանքները, որոնք դառնում են իրական պատկերներ տարբեր հաս-*

*ջարկեց ինձ օրհնել: Կեանքիս մէջ առաջին անգամ ես հաւատացի ու համաձայնուեցի:*

*Ս. Գրիգոր Լուսաւորիչ վերնատունը մատուռ է: Այն կառուցուել է Տիեզերքի թելադրանքով եւ տեղի նշումով: Պարզուել է, որ նրա հիմքում խաչքար կայ:*

*Շողերի մասին կարելի է երկար գրել, բայց կարծում եմ այսքանն էլ բաւական է նրան որոշակիօրէն ճանաչելու համար, միայն աւելացնենք գիտական աշխարհի ներկայացուցիչների մի քանիսի կարծիքը նրա մասին:*

*«Եթէ Շողերը չի առարկի, ապա գիտնականները կը խորանան նրա գրածների մէջ: Մասնագէտները, անշուշտ, կ'առաջադրեն իրենց հարցերը: Ու եթէ Շողերից ստանան դրանց պատասխանները, մենք աւելի հեշտ կ'աշխատենք:*

*Արդէն երկու տարի է որդուս հետ կարդում ենք մի հնդիկ փիլիսոփայի: Այսօր Շողերն իր ինֆորմացիաներով հաստատում է այն, ինչ կարդացել ենք այդ մեծ մտածողի տողերում: Իսկ ես համոզուած եմ, որ Շողերը նրա մասին ոչինչ չի լսել: Դա ապա-*



*Բերմուդեան Եռանկիւնի*

*կացութիւններով եւ բազմաթիւ անյայտներով, որոնց մի մասը դեռ չի պարզուել գիտութեան կողմից:*

*Նա ունի նաեւ բազմաթիւ բանաստեղծութիւններ, որոնք ստեղծւում են...*

*-Շողեր, դուք ինչպէ՞ս էք ստանում չափածոյ խօսքը:*

*-Տիեզերական կապի պահին կարծես բառերի ոսկեղէն անձրեւ է թափւում իմ վրայ, ես ընկնում եմ արդէն ուրիշ տարածաչափութեան մէջ:*

*-Ձեր չափածոյ խօսքում շատ նոր բառեր եւ անսովոր արտայայտութիւններ կան, ինչպէ՞ս կը բացատրէք այդ երեւոյթը:*

*-Այս բոլորը աղօթքներ են առ Աստուած: Լոյսը որպէս բանական միտք նստում է թղթի վրայ եւ ես գրում եմ այն, ինչ թելադրւում է վերեւից: Այս չափածոյ աղօթքները ներկայացնում եմ առանց խմբագրման (խօսքը «Շողերի աստուածային թելադրանքները» գրքի մասին է, որտեղ տեղ են գտել «Մարիամ Աստուածածին», «Երկրային մտքի ճանաչողութիւն», «Գրիգոր Լուսաւորիչ» (պոէմ) եւ բազմաթիւ այլ չափածոյ գործեր-Վ. Բ.):*

*Տիեզերքից իրեն շնորհուած ուժով Շողերը բուժում է տարբեր հիւանդութիւններ, իսկ բուժուող հիւանդները հաւատում ու դրուատում են նրան նաեւ իրենց շնորհակալական գրութիւններով:*

*Մեր զրոյցի վերջում նա առա-*

*ցոյցն է այն ճշմարտութեան, որ մաքուր ակունքներից է Շողերի ինֆորմացիան, վերեւից եկող»:*

*Սեդա Դոլուխանեան. պրոֆեսոր, տեխնիկական գիտութիւնների դոկտոր*

*«Իմ քառասնամեայ գիտական գործունէութեան ընթացքում առաջնորդուել եմ շատ կարեւոր մի սկզբունքով՝ հրաժարուել կատեգորիկ արտայայտութիւններից՝ այսպէս չի կարող լինել, սա սուտ է:*

*Եթէ մի բան չեմ հասկանում, ապա դա չի նշանակում, թէ չկայ նման երեւոյթ: Այդպէս էլ այժմ. առնչուեցի մի երեւոյթի հետ, որը շատ վաղուց է հետաքրքրում ինձ»:*

*Բեյլերեան Նորայր. քիմիական գիտութիւնների դոկտոր-պրոֆեսոր, Պետհամալսարանի ֆիզիքական քիմիայի ամբիոնի վարիչ*

*-Արտառոց է..., մարդն ունի ընդամէնը միջնակարգ մասնագիտական կրթութիւն, բայց խօսում է գիտական յատուկ տերմիններով, որոնց մի մասը մեր ուղեղին դեռեւս հասու չէ: Գուցէ թէ անցնի յիսուն, վաթսուն կամ հարիւր տարի եւ մարդկութիւնը կը հասկանայ այդ ամէնը որպէս ինֆորմացիա: Իսկ այսօր դեռեւս պատրաստ չենք ընկալելու նման ինֆորմացիան եւ ասել, թէ այդ ամէնը սուտ է կամ ցնդաբանութիւն, առնուազն յիմարութիւն է:*

*Շողերին թելադրուածի մի մասը գիտութեան մէջ կայ: Լիթիում, Լիթիումի կապը ջրածնի հետ. սրանք գիտութեան հիմնական խնդիրների մէջ մտնող հարցեր են: Համոզուած եմ, որ Շողերը ստանում է այդ ինֆորմացիան եւ հաղորդում մեզ. այդ փաստը կասկած չի յարուցում: Պարզապէս, Էյնշտեյնի ասածի համաձայն՝ իրօք, կայ մի բան, որ մեր ուղեղին հասու չէ:*

*Անահիտ Ալեքսանեան. ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիայի քիմիական ֆիզիքայի ինստիտուտի գիտաշխատող*

*Շողերը շարունակում է իր կապը Տիեզերքի հետ եւ չեմ կասկածում, որ ապագայում նա գիտութեանը կը զարմացնի նոր անակնկալներով:*

*Վերջում նշենք 2011 թ. հայ ժողովրդի հետ կապուած որոշ իրադարձութիւնների մասին.*

*-Դեկտեմբերի 22-ին Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատը վաւերացրեց Հայերի ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծը, որը 2012 թ. Յունուարի 23-ին քուէարկութեան դրուեց սենատում եւ 7.5 ժամ քննարկումից յետոյ սենատը վաւերացրեց այն ձայների 127 կողմ, 86 դէմ յարաբերութեամբ: Նախագահի կողմից ստորագրուելուց յետոյ այն օրէնքի ուժ կը ստանայ եւ Ֆրանսիայի մէջ Հայերի ցեղասպանութիւնը ժխտողներին կը սպառնայ մէկ տարուայ ազատազրկում եւ 45 հազար եւրօ տուգանք: Սա կարող է նախադէպ լինել այլ երկրներում Հայերի ցեղասպանութիւնը ճանաչելու գործում: Հայ ժողովուրդը երախտապարտ է Ֆրանսայի պետութեանը, որն անկախ Թուրքիայի սպառնալիքներից չերկնչեց եւ կատարեց իր բարոյական պարտականութիւնը հայ ժողովրդի եւ աշխարհի հանդէպ:*

*-ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների տունը ընդունեց մի բանաձեւ, որով կոչ է անում Թուրքիայի կառավարութեան՝ վերադարձնել բռնագրաւուած աւելի քան 2000 քրիստոնէական եկեղեցիներն ու այլ կալուածքները «իրենց օրինական տէրերին»: Եթէ ԱՄՆ հետեւողական լինի այդ բանաձեւի գործադրմանը, Թուրքիայի տարածքում գտնուող շատ եկեղեցիներ կը վերադարձուեն հայերին, յոյներին ու ասորիներին:*

*-Հայամէտ կոնգրեսականները չէզոքացրեցին թրքամէտ Մեթիու Բրայզայի յետագայ պաշտօնավարումը Պաքւում որպէս ԱՄՆ-ի դեսպան:*

*-Դեկտեմբերի 23-ին պաշտօնական այցով Հայաստան ժամանած Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ Հայաստանի նախագահի նստավայրում տեղի ունեցած բանակցութիւններում ստորագրուած վեց փաստաթղթերը երկու երկրների սերտ համագործակցութեան արդիւնք են: Գաղտնիք չէ, որ Հայաստանի ու Իրանի յարաբերութիւնները գտնւում են բարձր մակարդակի վրայ, բայց Իրանի նախագահի այս անգամ էլ չայցելելը Հայերի ցեղասպանութեան յուշարձանը՝ Ծիծեռնակաբերդ (առաջինը 2007 թ. էր), մտորումների առիթ է տալիս: Արտասահմանից ցանկացած պաշտօնեայի պաշտօնական այցով Հայաստան այցելելը եւ Ծիծեռնակաբերդ չայցելելը՝ յարգանքի տուրք մատուցելու նահատակների յիշատակին, անյարգալի վերաբերմունք է Հայաստանի, հայ ժողովրդի, ցեղասպանութիւն տեսած ժողովուրդների եւ մարդկութեան նկատմամբ...:*

*-Ազգութեամբ բուլկարացի Ցվետանա Պասկալեւայի Արցախի հակամարտութեան ժամանակաշրջանի պատերազմի թէժ տարիներին կատարած փաստագրական ժապաւէնները թարգմանուած են մի քանի լեզուներով եւ տարածւում են աշխարհով մէկ որպէս անկողմնակալ լրագրողի հաղորդումներ, որի շնորհիւ արդէն արժանացել է համաշխարհային համբաւի, իսկ Հայաստանի կառավարութեան կողմից պարգեւատրուել է շքանշանով: Նա յաղթայարեց միջազգային պատը՝ հայերի մասին ներկայացնելով իրականութիւնը, որը Հայաստանի դիւանագէտների պարտականութիւնն էր ու նրանք երեւի այդպիսի յաջողութեամբ չէին կարող ներկայացնել այդ միջազգային հասարակութեանը:*

*-Ուշադրութեան ու գնահատանքի են արժանի նաեւ անցնող տարում Երեւանում կառուցուած Մատենադարանի, օդանաւակայանի եւ այլ աչքի ընկնող կառոյցներ, որոնք աւելի են նպաստելու Հայաստանի եւ տարբեր երկրների յարաբերութիւնների զարգացմանը:*

*2012 թ. Նոր տարուայ եւ Ս. Ծննդի առթիւ շնորհաւորելով հայ ժողովրդին, ցանկանում ենք յաջողութիւն միջազգային ասպարէզում հայերի իրաւունքների արդար պաշտպանութեան՝ յանձին Ֆրանսայի երախտապարտ լինելով այն երկրներին, որոնք ճշմարտութեանը չեն դաւաճանում իրենց տնտեսական ու քաղաքական շահերից ելնելով, իսկ մեր հայրենիքին՝ սահմանադրական օրէնսդրական դաշտի գործադրում, աշխատատեղերի ստեղծում եւ ժողովրդի տնտեսական վիճակի բարելաւում:*

ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն իեռաձայնել՝
(626) 398-0506

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

# ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏԵԱՆ

*Շարունակուած էջ 6-էն*

*գաւորութեան յարմարեցումը մեր ժամանակի պայմաններուն», ինչպէս Սրբազանը կը մէջբերէր յիշեալ Կոնդակէն:*

*Սրբազան Պապը չէր մոռցած նաեւ ներմուծելու «հրաւէր մը անոնց որոնք բաժնուած են այս Առաքելական Աթոռէն», պարագայ մը որ ժողովին «տիեզերական» ըլլալը աւելի կասկածի կ'ենթարկէր, որովհետեւ, կը յիշեցնէ Սրբազանը, «միութիւնը միայն Քրիստոսի Մարմնոյն հետ միութիւն է, եւ ո՛չ թէ Հռոմի Աթոռին հետ», մէջբերելով Ամերիկայի Յոյն Օրթոտոքս Առաջնորդ Եագոպոս Արքեպիսկոպոսի խօսքը: Այս առումով «Միութիւն բնաւ չիրագործուիր եթէ Հռոմ միշտ պիտի ըսէ «եկայք առ իս»:*

*Դերենիկ Եպիսկոպոսի յաջորդ ակնարկները Մոսկուայի Ռուս Պատրիարքութեան եւ Խորհրդային Միութեան ներքեւ գործող Օրթոտոքս եւ Հայ եկեղեցիներու յարաբերութեանց կը վերաբերէին, ընդմէջ նոյն այդ եկեղեցիներուն եւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին, որոնց միջեւ վտանգաւոր եւ անհաշտ գիծը քաղաքական տեսանկիւնէն կը բաժնէր զանոնք՝ Արեւմուտքը քաղաքական գործիք կայսերապաշտութեան, իսկ Խորհրդային Միութիւնը՝ ամբողջ համայնավարութեան:*

*Անդին սակայն, 1958 թուին, Մոսկուայի մէջ Օրթոտոքս եկեղեցիներու միասին գործակցելու ճիգը կը սկսէր Մոսկուայի ռուս մետրապոլիտ Նիկողոս արքեպիսկոպոսին առաջարկով, ի ներկայութեան Աղեքսանդրիոյ, Անտիոքի եւ Ռումանիոյ պատրիարքներուն, ինչպէս նաեւ Վազգէն Ա. Ամենայն Հայոց եւ Վրաց Դաւիթ կաթողիկոսներուն: Նոյնիսկ Մոսկուայի նոյն մետրապոլիտին յատուկ պատգամով այլեւս առաջին անգամն ըլլալով Ռուս Եկեղեցին «կ'ողջունէր Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (ԵՀԽ) կեդրոնական մարմնի անդամները «իբրեւ ախոյեանները քրիստոնէական միութեան»:*

*Այս բոլորը կը դրսեւորուէին Հռոմի կազմելիք ժողովին որպէս հակադարձ շարժում: Օրթոտոքսներ կը հակէին ԵՀԽ-ին ու կը հեռանային Հռոմէն: Դերենիկ Եպիսկոպոս իր «Թուղթ Միութեան» եզրակացութեան մէջ դժուար կը գտնէր ժողովի մը գումարումը մէկ կողմէն, եւ ԵՀԽ-ի բռնած ուղղութիւնը միւս կողմէն, երկուքին միջեւ կանոնական մեծ տարբերութիւն տեսնելով, ինչպէս նաեւ աստուածաբանական եւ եկեղեցական-վարչական հեռաւորութիւն, մանաւանդ երբ նկատի առնուէին բողոքական եկեղեցիներու այլազանութիւնն ու անոնց հնագոյն եկեղեցիներու նկատմամբ անտարբերութիւնը:*

*Դերենիկ Սրբազան ամփոփելով իր միտքը իրաւամբ կ'ըսէր. «Եկեղեցին իբրեւ հոգիներու միութեան գերագոյն նշան պէտք է գործէ յոյս, իմաստութիւն, խրախոյս, արիութիւն եւ միութիւն բերելու մարդկութեան: Եւ քանի որ տակաւին կը պակսին ասոնք, եկեղեցին կը մնայ խախուտ եւ բաժան, դառնալով իրարու մրցակից եւ նոյնիսկ թշնամի:»*

### «ԹՈՒՂԹ ՀԵՐՔՄԱՆ»

*Հայ Հռոմէականներու Պատրիարք Գրիգոր Պետրոս ԺԵ Կարտինալ Աղաճանեան 1950 թուին «Հովուական Թուղթ» մը հրապարակեց Պէյրութի «Աւետիք» ամսագրի Յուլիս-Օգոստոս թիւին մէջ, Մխիթար Աբբահօր մահուան երկրորդ հարիւրամեակին առիթով: Աղաճանեան Պատրիարք «հրաւէր» կը կարդար «բովանդակ հայութեան՝ դառնալու նախնեաց ամբողջական լոյս հաւատքին, կաթողիկէ միութեան մէջ»: Թուղթին միտքը եղած է ի զուր »հաստատել« որ Հայաստանեայց Եկեղեցին իբր թէ նախապէս յարած էր կաթոլիկութեան եւ ապա բաժնուած անկէ, թէ ան «բաժնուելով տուժած է կրօնապէս, քաղաքականապէս եւ մշակութապէս», ստորագրելով իր Թուղթը «Պատրիարք Տանն Կիլիկիոյ եւ Կաթողիկոս Հայոց Ուղղափառաց» անհիմն, խառնաշփոթ եւ անվաւեր տիտղոսով:*

*Տարի մը ետք Հռոմի Պիոս ԺԲ Քահանայապետը իր* Sempeternus Rex *(Յաւիտենական Թագաւոր) անուն Կոնդակով, Քաղկեդոնի ժողովի 1500-ամեակին առիթով, կոչ մը կ'ուղղէր մասնաւորաբար արեւելեան քրիստոնեայ եկեղեցիներուն, (Հայ, Ղպտի, Ասորի), զանոնք հրաւիրելով միանալու կաթոլիկութեան, քանի որ անոնք մերժելով 451 թուի Քաղկեդոնի ժողովը, ըստ Պիոս Պապի, անոնք իբր թէ «հերձեալ հատուածներ» եղած էին: Կարտինալ Աղաճանեանի եւ Պիոս Պապի շարժումները անպայման համընթաց էին եւ նոյն եղանակը կը նուագէին յումպետս եւ կրկնակի:*

*Դերենիկ Եպիսկոպոս, Դպրեվանքի իր վերատեսչութեան շրջանին հրատարակեց «Թուղթ Հերքման» գիրքը, 67 էջ եւ վեց հրատարակութիւններով, ընդարձակ եւ մանրամասնեալ կերպով հերքելով Աղաճանեան Պատրիարքի «հրաւէր«ին տուն տուող պատմական եւ իրաւական խեղաթիւրումները: «Թուղթ Հերքման»ը կրցած է ուղիղ եւ կորովի կեցուածք ցոյց տալ, հաստատելով որ Հայց. Եկեղեցին եղած է միշտ ինքնագլուխ, միակ գլուխ ունենալով Քրիստոս, Ս. Առաքեալներէն հաստատուած եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի ձեռքով նուիրագործուած, առանց որեւէ ենթակայութեան Հռոմի Եկեղեցիին:*

*Սրբազանը ցոյց տուած է թէ Հայոց Եկեղեցին Հռոմի Եկեղեցիէն չէր կրնար բաժնուած ըլլալ, քանի որ անոր երբեք միացած չէր, զոր Աղաճանեան Պատրիարք գիտնալով հանդերձ «հետեալ հատուած» կը նկատէր: Դերենիկ Սրբազան յաջողած է ուղիղ, պարզ եւ անսեթեւեթ ոճով ու պատմական վկայութիւններով լիաբերան հաստատել որ Հայց. Առաքելական Եկեղեցին իր ծագման օրերէն մինչեւ այսօր պահած է իր անկախութիւնն ու ինքնուրոյնութիւնը, որոնց հակառակ ինչ որ կը գրուի, զուրկ է պատմական վկայութիւններէ եւ հակառակ է այդ վկայութիւններուն: Անոնք կը մնան խոցելի եւ մերժելի: Աւելին, Սրբազանը փաստացի տուեալներով փորձած է շատ պարզ իրողութիւն մը հասկցնել թէ «Հայ Եկեղեցին սեփականութիւնն է հայ ժողովուրդին», մինչդեռ հայ կաթոլիկներ վերջին հաշուով դարձած են մասն եւ բաժինը Հռոմի Եկեղեցւոյ՝ հեռու հայրենի հողէն:*

*Դերենիկ Սրբազան քննադատած է նաեւ Հայ Կաթոլիկ առաջին Պատրիարք Աբրահամ Արծիւեանի «անկանոն, անվաւեր եւ ապօրէն» կաթողիկոսութիւնը, որուն կը վերագրէր Կարտինալ Աղաճանեան «Նահապետ Տանն Կիլիկիոյ Վերանորոգ Կաթողիկէ Կաթողիկոսական Աթոռիս», դարձեալ խառնաշփոթ եւ յերիւրածոյ տիտղոսը: Անկանոն եւ անվաւեր, որովհետեւ Արծիւեան իրեն գործակից կամ կամակից ոչ մէկ եպիսկոպոս ունէր Կիլիկեան թեմերուն մէջ: Այդ պատճառով նախ երեք եպիսկոպոսներ «ձեռնադրեց« 1740 թուին՝ Յակոբ Յովսէփեան, Իսահակ Բարսեղեան, եւ երրորդ մը՝ Մելքոն Թուխմանեան անուններով, եւ այդ երեքով ալ ինքզինք Կաթողիկոս «ձեռնադրել» տուաւ:*

*Օրմանեան Պատրիարք իրաւամբ «մանկական խաղ» որակած է կատարուածը, «իւր շինծու եպիսկոպոսներէն օծում ստանալով եւ պարզ ինքնախաբութեամբ գոհունակութիւն ստանալով»: Յետագային երբ կրկին նոյն յանկերգը նուագեցին Հոգելոյս Տ.Տ. Վազգէն Ա Հայրապետի կեանքի ամենավերջին տարիներուն, վրդովում եւ անհարկի ցաւ պատճառելով Նորին Սրբութեան, մենք այն ատեն Հայրապետի ցուցմունքին համաձայն պատասխան մը գրեցինք Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտօնաթերթին մէջ եւ Արծիւեանի ձեռնարկը կոչեցինք «սնանկութիւն»:*

*Դերենիկ Եպիսկոպոս խնդրոյ առարկայ ըրած է «կաթողիկոս» տիտղոսը զոր յերիւրած են Արծիւեանի յաջորդները, քանի որ իր Պապական պաշտօնագիրներուն մէջ ինք մի՛այն «Պատրիարք Կիլիկիոյ» ճանչցուած է, եւ երեւակայել որ երթալէն վերոյիշեալ երկարապատում եւ խանգարիչ տիտղոսները գոյացեր են որպէս «յերիւրածոյ» տիտղոսներ: Հոս նաեւ յայտնի կը դառնայ Հայ Կաթոլիկ Պատրիարքութեան ծննդեան թուականը՝ 1740, եւ ոչ անկէ առաջ, երբ Հայաստանեայց Եկեղեցին դարեր առաջ 301 թուականէն սկսեալ, հայրենի հողին վրայ իր Էջմիածնի սրբավայրով ինքնավստահ եւ կանոնական Կաթողիկոսներու շարքով դարեր շարունակ վարեր է Ամենայն Հայոց Հայրապետութիւնը, հարուստ եւ ո՛չ դատարկ եւ մուրացածոյ գոյութեամբ:*

*Գիրքին Սրբազան հեղինակը հերքած է նաեւ Աղաճանեան Կարտինալի Ս. Պետրոսին վերագրած «առաքելապետ» անգոյ տիտղոսը, մինչ հնաւանդ եկեղեցիներ իրենց առաջին քարոզիչները ճանչցած են 12 Առաքեալներէն մին կամ միւսը հաւասարապէս: Պետրոս Առաքեալին նման տիտղոս մը վերագրելով «վարչական» հանգամանք մը տալ փորձած է Ամենապատիւ Կարտինալը:*

*Նոյն «հրաւէր»ին մէջ Կարտինալը խղճալով կ'աւաղէ որ «Հայոց Եկեղեցին Հռոմէն բաժնուելով տուժած է կրօնապէս, քաղաքականապէս եւ մշակութապէս»: Աւաղել, այո՛, եւ սակայն հակառակ ուղղութեամբ, զի ինչ որ հայերն ու Հայ Եկեղեցին կրեցին Եւրոպայէն եւ լատիններէն, ասոնք եղան Կիլիկիոյ Թագաւորութեան անկումին պատճառը 1375 թուին:*

*Այս առնչութեամբ նոյն օրերուն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնաթերթ ՀԱՍԿ ամսագրի արթնամիտ խմբագիրը Սիմոն Սիմոնեան դիպուկ կերպով վերլուծեր էր այդ ձախող կէտը «որպէս կանխայայտ եւ ոսկեղէն խոստումներ, որոնց ի տես ընթերցողը ակամայ կը տարուի խորհիլ թէ հայ ազգը այսօր գերագանց հայրենիքի մը տէր, բազմամիլիոն եւ աշխարհակալ ժողովուրդ մը եղած պիտի ըլլար, եթէ միայն կաթոլիկ դարձած ըլլար, եւ թէ այսպէս փոքր ու տկար ժողովուրդ մը մնաց, աւաղ, վասնզի չյարեցաւ կաթոլիկութեան» (ՀԱՍԿ, 1950, էջ 363):*

*«Թուղթ Հերքման»ը տուած եղաւ վերջնական պատասխանը Հայ Կաթոլիկ Պատրիարքի անժամանակ եւ անօգուտ «հրաւէր»ին, հարց տալով որ ինչո՞ւ այդ հրաւէրը կ'ուղղուէր հայութեան երբ ան ունի իր Առաքելական եւ Ուղղափառ եկեղեցին, մանաւանդ որ իրենք յայտնապէս բաժնուեցան Հայ Եկեղեցիէն Յամի Տեառն 1740-ին, եւ ի Թուին Հայոց ՌՁԽ:*


# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 for USA**

*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**

*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ----------------------------------------**

**Address: ----------------------------------------**

**City: --------- State:--------- Zip Code:------**

**Country: ------------**

**Tel :----------------------- Fax : ------------------------**





## ՄԱՀԱԶԴ



*ԳԱՌՆԻԿ ԳԱՐԱՅԵԱՆ*
*(Ծնեալ՝ Դեկտեմբեր 23, 1921, Հալէպ Սուրիա)*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝ ԳԱՌՆԻԿ ԳԱՐԱՅԵԱՆի մահը որ պատահեցաւ Շաբաթ, 18 Փետրուար, 2012ին: Թաղման եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 25 Փետրուար, 2012ին, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Սուրբ Լեւոն Մայր տաճարին մէջ, 3325 N. Glenoaks Blvd. Barbaunk, CA 91504:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԱՐՇԱԿ ԳԱԼԷՆՏԷՐԵԱՆի մահուան տխուր առիթով (մահացած Քուէյթ) «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը իր խորազգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար՝ թերթի գլխաւոր խմբագիր՝ Տօքթ. Արշակ եւ Տիկին Վարդուհի Գազանճեանին:*

*Կ՚իմանանք թէ հանգուցեալի յուղարկաւորութիւնն ու թաղումը տեղի պիտի ունենայ Լոս Անճելոսի մէջ: Թուականը՝ պիտի հաղորդուի յետագայ օրերուն:*

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԱՆԱՂԱՐՏ ՊԱՀԵԼՈՒ

*Շարունակուած էջ 15-էն*

*րութեան քղամիդի ներքոյ... Թերեւս... Արեւմուտքը եւ նրան լծակից ազգադաւ ու արիւնակից մութ ուժերը, հարկաւ, շահի ու նիւթի ակնկալութեամբ փորձում են դանդաղ վերացնել ազգայինը, մեզ օտարել մեզնից, աղարտել հայի էթնիկական կերտուածքը: Սա դաւադիր քաղաքականութիւն է, որի դէմ պէտք է պայքարել բոլոր միջոցներով ու մեթոդներով:*

*Մեր ռադիոհեռուստատեսային հաղորդումներում (նկատի ունեմ պաշտօնական հաղորդավարների հաղորդումները եւ դրական յատկանիշներով գնահատելով 3-4 հոգու) գրեթէ բացակայում է կենդանի բանաւոր խօսքը՝ իր բնական, լեզուաբանական, գեղագիտական, ճարտասանական ու հոգեբանական օրինաչափութիւններով: Հասկանալի է, որ ռադիոհեռուստատեսային հաղորդումները մեծ լսարանների համար են. հաղորդավարներին լսում են հարիւրհազարաւոր մարդիկ ո՛չ միայն հայրենի երկրում, այլեւ տարասփիւռ հայութեան շատ վայրերում: Եւ հաղորդավարը պէտք է լինի կատարեալ ճարտասան, նա պիտի լիարժէք տիրապետի հայոց լեզուի բոլոր նրբերանգներին, խօսքի արուեստի դրսեւորման բոլոր միջոցներին: Մինչդեռ հաղորդումներում գերիշխում է ծայրայեղ արագախօսութիւնը: Շատ դէպքերում չեն պահպանում հնչերանգը, հայրենի բառային շեշտի ճշգրիտ կիրառութիւնները, ելեւէջաւորումները, պահանջուող դադարները, որոշ բառերի (գրութեամբ եւ արտասանութեամբ տարբերուող) ճիշտ արտասանութիւնը: Համարեա չեն նկատւում առանձին բառերի ու բառակապակցութիւնների ընդգծումները, որոնք բանաւոր խօսքում ընկնում են տրամաբանական շեշտերի տակ: Մինչդեռ խօսքի վերհատոյթային հնչիւնական համակարգում մեծ դեր է կատարում հնչերանգը՝ իր բաղադրիչներով (բառային շեշտ, տրամաբանական շեշտ, դադարներ, ելեւէջումներ եւ այլն): Հնչերանգով որոշւում է խօսքի եւ նրա բաղադրիչ մասերի (նախադասութիւնների, դրանց երանգային ու կառուցուածքային բոլոր տեսակների, բաղադրիչների, բառերի, շարոյթների եւ այլն) արտասանական բնոյթը: Հնչերանգը սերտօրէն կապուած է խօսքի արտայայտչութեան խնդիրներին: Խօսքի ճիշտ արտաբերման դէպքում նա որոշում է ձայնային-առոգանական բոլոր տարրերը, որոնք բնականօրէն (ոչ արհեստականօրէն, շինծու) ներկայացնում են մի ներդաշն ամբողջութիւն, որ գլխիչ դեր է կատարում հաղորդակցման ընթացքում եւ մեծ չափով նպաստում մտքերի անմիջական ընկալումների:*

*Հայրենական մեծ պատերազմի օրերին միութենական ռադիոհաղորդավարը տաղանդաւոր Լեւիտանն էր, որ օրուգիշեր հաղորդում էր խորհրդային տեղեկատուական պիւրոյի պատրաստած նիւթերը: Թւում էր, թէ նա՝ Լեւիտանը, առաջնորդում էր խորհրդային զօրքերի գրոհը փաշիստների դէմ: Նրա խորհրդաւոր ձայնը, առինքնող հաղորդումները լսելի էին Խորհրդային Միութեան բոլոր անկիւններում, աշխարհի բոլոր ծագերում: Նրա ձայնային առոգանութեան, հնչերանգի մէջ պարզորոշ երեւում էին գալիք յաղթանակները: Եւ, ըստ երեւոյթին, յետագայ յաղթանակների մէջ իր ծանրակշիռ բաժինն ունէր նաեւ Լեւիտանը, որի մաքուր ու հնչեղ խօսքը զինավառում էր ե՛ւ ռազմաճակատը, ե՛ւ թիկունքը, անհագ ատելութիւն բորբոքում փաշիստ ճիւաղների նկատմամբ: Լեւիտանը հմտօրէն օգտագործում էր ռուսերէնի հնչերանգի ամբողջ զինանոցը՝ իր ելեւէջային բազմազան բնաբուխ դրսեւորումներով:*

*Ցիրաւի, ճիշտ ու առողջ խօսքը, որի մէջ օրինաչափօրէն պահպանւում են ու կիրառւում արտայայտչութեան բոլոր բնական տարրերը, հրազէնից ուժեղ է: Նա կարող է բանակներ շարժել, նրանց տոգորել յաղթանակի հաւատով, զինավառել հոգեղէն, բարոյական վիթխարի լիցքերով ու էներգիայով: Եւ այդպիսին էր հաղորդավար Լեւիտանի խօսքը:*

*Ի դէպ, հրաշալի հաղորդավարներ էին մեր Վերա Յակոբեանը, Նարա Շլեպչեանը եւ ուրիշներ, որոնց նմանները հիմա գրեթէ չկան մեր ռատիօհեռուստահաղորդումներում:*

*Ո՞րն էր մեր երեւելի դերասանների, ասմունքողների՝ Վահրամ Փափազեանի, Վաղարշ Վաղարշեանի, Հրաչեայ Ներսիսեանի, Աւետ Աւետեանի, Բաբգէն Ներսիսեանի, Մհեր Մկրտչեանի, Մետաքսիա Սիմոնեանի, Վարդուհի Վարդերեսեանի, Վլադիմիր Աբաջեանի, Սուրէն Քոչարեանի եւ շատ ուրիշների արտայայտումների հմայքը, գաղտնիքը, այսինքն՝ այն, որ նրանք դահլիճներ էին քարացնում, դառնում համակ սէր ու հիացմունք եւ դրական հսկայական լիցքեր ու էներգիա պարգեւում հանդիսականներին: Պատասխանը միակն է՝ խօսքը... Բնագրային մաքուր խօսքի գլխիչ, մոգական զօրութիւնը, որով լիուլի օժտուած է արքայական հայոց լեզուն: Այո՛, խօսքը, որ մի դէպքում կարող է սթափեցնել վհատուածին, հիւանդին, մէկ այլ դէպքում (ինչպէս հաղորդուող արդի աղբախառն, անարուեստ հեռուստասերիալները) կարող է շիտակ ճանապարհից հանել առանձին կամազուրկ մոլորեալների, երբեմն նաեւ՝ առողջ հոգիների...*

*Ճշգրիտ հնչերանգը հարստացնում է խօսքի արտայայտչական բովանդակութիւնը եւ դրսեւորում զգացմունքային, հոգեմտաւոր, կամային, վերաբերմունքային ամենատարբեր մտքերի հաղորդումներ, մանաւանդ, եթէ խօսքը յագեցած է մարդասիրական, սոցիալական-քաղաքական առողջ գաղափարներով, կենսական օգտակար հարցադրումներով:*

*Եւ նշուած մեկնաբանումների տեսանկիւնից ելնելով՝ բնաւ դրական քննութիւն չեն բռնում մեր ռատիօհաղորդումներից շատերը: Ամէն ոք չէ, որ կարող է հմտօրէն, մասնագիտօրէն ճիշտ կատարել հաղորդավար ճարտասանի, այո՛, ճարտասանի, բարդ ու պատասխանատու դերը: Հաղորդավարների ընտրութիւնը պէտք է լինի յոյժ նպատակային եւ օրինաչափ: Նրանք պիտի լինեն կատարեալ ճարտասաններ ու խօսքի տիրակալներ՝ այդ արտայայտութիւնների խոր ու գիտական իմաստներով:*

*Իսկ ինչ վերաբերում է մեր հաղորդակցական միւս կարեւոր միջոցի՝ մամուլի լեզուին, նրա էջերում թոյլ տրուող լեզուականոճական, մտքի աղաւաղումներին, օտարաբան բառերի անհարկի կիրառութիւններին եւ այլ կարգի լեզուական շեղումներին ու անկանոնութիւններին, որոնք որակ են կազմում, կարելի է փաստարկուած անդրադառնալ մի առանձին վերլուծական յօդուածով:*

*Բոլոր դէպքերում հրատապ ու կարեւոր է, որ ամենուրէք բարձրացնենք պետական կարգավիճակ ունեցող հայոց լեզուի իրական կշիռն ու բովանդակութիւնը եւ արժանայիշատակ Պարոյր Սեւակի արտայայտութեամբ՝ պահպանե՛նք ու հարստացնե՛նք մայրենին:*

## «ՔԱՋ ՆԱԶԱՐ»
## ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

**Ամէն Կիրակի երեկոյեան**
**ժամը 10:00–ից 12:30**
**Կլէնտէյլի 380-րդ կայանից**

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ

## ԳՈՒՊԱ

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

*1959 թուականի Գուպայի յեղափոխութենէն ետք երկրի արտադրութիւնն ու ճարտարարուեստը պետութեան հակակշիռին տակ առնուած էր: Ֆիտէլ Գասթրոյի առողջական պատճառով իշխանութեան ղեկը յանձնուած է իր եղբօր Ռաուլ Գասթրոյի: Այս վերջինն սկսաւ նոր բարեկարգութիւններ ներմուծել երկրի յատկապէս առեւտրա-տնտեսական բնագաւառներու մէջ:*

*Անցեալ տարի, Ապրիլին տեղի ունեցած երկրի կոմունիստ կուսակցութեան ընդհանուր համագումարը որոշեց զարկ տալ ժողովուրդի կենսամակարդակի բարձրացումին: Այդ կապակցութեամբ արտօնութիւն տրուեցաւ անհատական փոքր ձեռնարկութիւններու ստեղծումին: Արդարեւ, ներկայիս 350,000 անհատական ազատ առեւտուրի հաստատութիւններ կը գործեն: Ասոնց շարքին կը գտնուին դերձակներ, սափրիչներ, կօշկակարներ, ճաշարաններ, սրճարաններ, նպարատուներ, հաշուապահութեան գրասենեակներ եւ տասնեակ մը այլ գործատեղիներ: Այժմ արտօնուած է որ անհատ մը արդիւնաբերական փոքր հաստատութիւն մը ունենայ 7-10 գործաւորներ աշխատցնելով: Անշուշտ իւրաքանչիւրն իր սահմանին մէջ հարկաւոր է տրամբանական շահատուրք մը վճարելու պետութեան:*

*Այս երեւոյթը մեծ խանդավառութիւն ստեղծած է Գուպայի մէջ: Երկիր մը որ կը ցանկայ մասամբ հետեւիլ Չինաստանի օրինակին: Իսկ եթէ գուպացի ժողովուրդին հարց տրուի թէ այս բոլորէն ետք ի՞նչ է իրենց գլխաւոր ցանկութիւնը: Պատասխանը՝ ազատ երթեւեկ դէպի արտասահման:*

## ՅՈՒՆԱՍՏԱՆ

## ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԾ ՏԱԳՆԱՊԸ ԱՀԱԶԱՆԳԱՅԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

*Օր ըստ օրէ կը բարդանայ Յունաստանի տնտեսական տագնապը: Երկրի ղեկավար շրջանակները կը ջանան լուծում մը գտնել այս ճգնաժամային իրավիճակին, որուն գլխաւոր պատճառը կուտակուած յետնեալ ահաւոր պարտքերն են: Պիւտճէի բացը մեղմացնելու համար պետութիւնը դիմած է ոչ միայն տեղական ծախսերու սահմանափակումին, այլեւ աշխատաւորներու եւ թոշակառուներու վիճակուած վճարումներու անհամեմատ կրճատումին: Այս իսկ պատճառով հազարաւոր յոյներու ամենօրեայ ցոյցերու դրութիւնը կը շարունակուին: Միլիոնաւոր յոյներու բողոքն այն է որ անոնք արդէն բաւական զոհաբերումներ եւ զիջողութիւններ կատարած են եւ անհանդուրժելի կը նկատեն յաւելեալ կրճատումներ տեսնել իրենց թոշակներուն վրայ:*

*Յունաստան սնանկութեան դռներուն դիմաց կը գտնուի եթէ յառաջիկայ ամիս պետութիւնը իր խոստացած 19 պիլիոն տոլարի պարտքը չի կարենայ վճարել: Իրերու այս կացութեան դիմաց «Եուրօ» դրամանիշը գործածող երկիրներու ֆինանսներու նախարարները կը մտադրեն 171 պիլիոն տոլարի նոր փոխտուութիւն մը կատարել Յունաստանին:*

## ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

## ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ՇԱՀՈՅԹ Կ'ԱՊԱՀՈՎԷ ԱՄՆ-Ի ՄԷՋ

*Տիթրոյթ եւ Սիաթլ քաղաքներու տնտեսական իրավիճակը բարելաւում արձանագրեց, շնորհիւ ինքնաշարժի արտադրութեանց շահութաբեր իրավիճակին: Արդարեւ 2009 թուականին սնանկութեան եզրին հասած GM ընկերութիւնը 2011ի տուեալներով 9.19 պիլիոն (միլիառ) տոլար շահ ապահոված է: Յառաջիկայ Մարտ ամիսէն սկսեալ այդ շահին մէկ մասը որպէս նուէր պիտի բաշխուի ընկերութեան Արհեստակցական Միութեան 475000 անդամներուն: Այսպիսով իւրաքանչիւր գործաւոր պիտի ստանայ 7,000 տոլար դրամական պարգեւ (bonus):*

*Սէաթլ Թագմա շրջանի գործարարներէն իւրաքանչիւրը պիտի ստանայ 3,500-4,000 տոլարի չէքեր:*

## ՀԱՅԱՍՏԱՆ

## ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐՈՒ ՆԵՐԱԾՈՒՄՆ ԱՃԱԾ Է 50%

*Հայաստանի պետական եկամուտներու կոմիտէէն ստացուած տեղեկութեանց համաձայն 2011 թուականին երկրէն ներս ներածուած է 29,400 ինքնաշարժ: Անոնցմէ 26,400-ը մարդատար են, իսկ երեք հազարը բեռնատար:*

*2010 թուականի համեմատութեամբ ներածուած ինքնաշարժներու քանակն աւելցած է 50%-ով: Նշենք նաեւ որ ինքնաշարժի ներմուծման մրցանիշը գրանցուած է 2008 թուին մօտ 42 հազար հատ: Սակայն այնուհետեւ ճգնաժամի հետեւանքով կտրուկ անկում արձանագրուած է: Այսպէս 2009-ին ներմուծուած է 17.3 հազար, իսկ 2010-ին՝ 20.3 հազար հատ:*

## ԻՐԱՆ

## ԻՐԱՆ ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆ ԿԸ ՄԵՂԱԴՐՈՒԻՆ ՈՐՊԷՍ ՔԱՐԻՒՂԻ ԳԻՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՂՆԵՐ

*Իրանի ուժանիւթի նախարարը յայտարարութիւն մը կատարելով ըսաւ թէ յառաջիկայ Յուլիսի մէկէն սկսեալ պիտի կասեցնէ քարիւղ արտածել դէպի Անգլիա եւ Ֆրանսա: Այս կարգադրութեամբ Իրան որպէս թէ կ'ուզէ պատժել Եւրոպական Միութիւնը, Իրանի դէմ չղթայազերծած տնտեսական արգելքներուն համար: Սակայն ֆրանսական Total եւ Բրիտանական B.P. ընկերութիւններն արդէն կանխօրօք որոշած էին քարիւղ չի ներածել Իրանի իսլամական հանրապետութենէն:*

*Ներկայիս քարիւղի գիներու անակնկալ բարձրացման համար կը մեղադրուին Իրանն ու Չինաստանը: Նշենք նաեւ որ քարիւղի սպառողական պահանջն աւելած է Չինաստանի մէջ 5% համեմատութեամբ: ԱՄՆ-ի մէջ քարիւղի պահանջն նուազած է 5% տոկոսով:*

